

Происхождение и проблемы идентичности тюркоязычных групп Ирана

(Сборник статей)

Под редакцией Гарника Асатряна и Левона Епископосяна

СОДЕРЖАНИЕ

1. Գառնիկ Ասատրյան. *Իրանում թյուրքախոսության խնդրի շուրջ*
2. Геворг Аветикян. *Концепции идентичности тюркоязычных иранцев*
3. Геворг Аветикян. *Тюркоязычные иранцы в политике соседних государств XX в.*
4. Վիկտորիա Առաքելովա, Քրիստինե Գրիգորյան (Իրանագիտության կովկասյան կենտրոն). *Թուրքմենների ծագումնաբանությունն ըստ ժողովրդական բանահյուսության. «Օղուզ-նամե», «Թուրքմենների տոհմաբանություն»*
5. Վիկտորիա Առաքելովա, Քրիստինե Գրիգորյան (Իրանագիտության կովկասյան կենտրոն). *Իրանում թուրքմենական համայնքի ձևավորումը՝ ցեղային միությունները և դրանց ստորաբաժանումները (թայիֆե, թիրե)*
6. М. Мадади. *Некоторые тюрские топонимы северного Ирана.*
7. Левон Епископосян. *Реконструкция древних миграций иранских популяций на основе генетических данных.*

ԻՐԱՆՈՒՄ ԹՅՈՒՐՔԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Գառնիկ Ասատրյան

Այսօր արդեն գրեթե դարձել է ընդհանուր, մի շարք առումներով Բաքվի քարոզչության շնորհիվ և արտասահմանի թյուրքական լոբբիստների ջանքերի շնորհիվ (այդ թվում՝ Ռուսաստանի), երկու մասի բաժանված մեկ ժողովրդի՝ «ադրբեջանցիների» մասին պնդումը, որոնք իբր ապրում են ներկայիս Ադրբեջանի Հանրապետության տարածքում որպես տիտղոսակիր ժողովուրդ, իսկ Արաքս գետից հարավ իրանական Արդաբիլ, Արևելյան Ատրպատական, Արևմտյան Ատրպատական, Զանջան և նույնիսկ Ղազվին նահանգներում, որպես բազմամիլիոն փոքրամասնություն:

Ես արդեն խոսել եմ արհեստական ներքին քաղաքական զարգացումների ծրագրավորման համար մանիպուլիացիաներում թվաքանակի սիմվոլիզմի մասին, այդ թվում նաև Իրանում և նրանց հանդեպ հասարակական գիտակցության պատրաստման մասին: Ըստ Ս.Կ. Կարա-Մուրզայի «ներշնչման կախարդական ուժը, որով օժտված է թիվը, այսպիսին է, որ եթե մարդը ընդունել է ինչ-որ անհեթեթ քանակական պնդում, նրան արդեն գրեթե անհնար է համոզել ոչ միայն տրամաբանությամբ, այլ նաև՝ արդեն բազմաթիվ փաստերով: Թիվը ունի ուղեղը անշրջելի դարձնելու կարողություն»:

Ի սկզբանե, արդեն ԽՍՀՄ անկման առաջին տարիներին, շրջանառության մեջ դրվեց 33 միլիոն թիվը, այսպես ասած Իրանի Իսլամական Հանրապետությունում ապրում են ավելի քան 30մլն «ադրբեջանցիներ»: Ընդ որում, այն ժամանակ, երբ Իրանի բնակչության ընդհանուր թիվը չէր գերազանցում 60 միլիոնը: Այսինքն, փաստացի, պնդվում է, որ իրանցիների կեսը «ադրբեջանցիներ» են: Եվ ահա, «33»-ը իր սակրալ լուսապսակով հետագայում հանդես էր գալիս «ավելի քան երեսուն միլիոն» ձևով ոչ միայն դիլետանտային խմբավորումների և կողմնակալ քաղաքական շրջանների մեջ, այլև միանգամայն հեղինակավոր և նույնիսկ ընդհանրապես չհետաքրքրված վերլուծաբանների և քաղաքական գործիչների ուղեղների մեջ:

Ռուսական մամուլում, օրինակ, այս թիվը երկար ժամանակ լուրջ էր ընդունվում: Ընդ որում, ոչ մի կոնկրետ բացատրություններ չեն տրվում, որպես կանոն, հղում են կատարում այն բանի վրա, որ իրանական իշխանությունները իրենց քաղաքացիներին տարբերակում են միայն կրոնական հատկանիշով, և, հետևաբար, չկան հավաստի տվյալներ, սակայն, իրականում, իբր Իրանի ամբողջ հյուսիս-արևմուտքը և Թեհրանի կեսը բնակեցված է «աղրբեջանցիներով» և այլն, և այլն:

Որևէ մեկը չի մտածել, թե ինչի վրա է հիմնվում երեսուն միլիոն թիվը, եթե նույնիսկ վերցնենք Իրանի ամբողջ հյուսիս-արևմուտքը՝ ներառյալ Գորգանի և Սեմնանաի մերձկասպյան շրջանները, և հասցնենք այն մինչև Դամավանդի նախալեռները՝ մայրաքաղաքի հետ միասին և այս ընդարձակ տարածքի ամբողջ բնակչությանը համարենք «աղրբեջանցի», այդ դեպքում նույնիսկ երեսուն միլիոն չի ստացվում:

Հնարավոր է, նմանատիպ անհամապատասխանությունների համար, Իրանի ֆրագմենտացիայի մշակողները ի վերջո հասկացան, որ Իրանում ավելի քան երեսուն միլիոն «աղրբեջանցիների» պնդումը արդեն սահմանակից է անպարկեշտությանը, և նույնիսկ կարող է վարկաբեկել գաղափարը, ինչպես նաև, ինչպես նրանք համոզվել են, չնայած դրա լայն տարածմանը, այն արդեն չի գործում: Այդ պատճառով, շուտով, հայտնվեց այլ թիվ՝ քսան միլիոն, որը սկսեց շրջանառվել ոչ պակաս ակտիվությամբ: Դատելով ամեն ինչից, այն բավականին հաջողությամբ ներդրվեց նաև ռուսական քաղաքական շրջաններում: Որպեսզի ամեն ինչ լինի ճշմարտանման և շատ կատեգորիկ հանդես չգա, այս անգամ որոշվեց ցածր շեմ կեղծ թվաքանակի՝ տասնութ միլիոն: Հետևաբար, ենթադրվում է, որ ոչ միայն փորձագետների, այլև ցանկացած մտածող կողմնակի դիտորդի մոտ չի կարող չառաջանալ հիմնավորված կասկածներ նման հաշվարկների հավաստիության մասին (առաջ է գալիս երրորդ ճշգրտման անհրաժեշտությունը), մանավանդ, որ ոչ-ոք և երբեք չի անցկացրել Իրանի բնակչության մարդահամար ըստ լեզվական հատկանիշի, որը հիմնական պահանջն է, ըստ որի ավանդական մոտեցումների կողմնակիցները որոշում են երնիկ պատկանելությունը Իրանի այս կամ այն խմբի: Միակ աղբյուրը, որտեղ համակարգված ձևով հանդես է գալիս բնակեցված շրջանների բնակիչների լեզուն (այն էլ կարճ նշումների և առանց թվային տվյալների) բազմահատոր «Իրանի աշխարհագրության բառարանն է», հրատարակված երկրի զինված ուժերի գլխավոր

շտաբի կողմից դեռևս Շահի օրոք և վերահրատարակված նորացված ձևով Իսլամական հեղափոխությունից հետո: Սակայն կազմել Իրանի լեզվական պատկերի մասին այդպիսի ամբողջական պատկերացում այս աշխատանքով միանգամայն անհնար է:

Քիչ թե շատ, Իրանում թյուրքոֆոնների քանակի մասին հավաստի տվյալ է ինը միլիոնը,-վերջերս ասել է հայտնի իրանական ազգաբանագիտ. Սեքանդար Ամանոլահին: Սակայն ընդգծել, որ թվաքանակի մեջ ներառված են ոչ միայն հենց «ադրբեջանցիները», այլ նաև այլ թյուրքախոս խմբեր (բացառությամբ թուրքմենների), շահսևանները, այլանունները, հալաջները (որոնք ապրում են Սավայում, Թեհրանից ոչ հեռու և գրեթե ամբողջապես պարսկալեզու են այժմ) և այլն: Ընդ որում, Իրանի բազմաթիվ թյուրքալեզու խմբերի միավորումը մեկ միասնության մեջ, և նրանցից «ադրբեջանցի» դարձնելը սխալ է, որը հատուկ է շատ հեղինակների, որոնք անդրադարձել են խնդրին, որոնք այդ թվում նաև քաղաքականորեն անկողմնակալ են: Ավելին, թյուրքախոսությունը, տարբեր պատմական պատճառների հետևանքով, այդ թվում՝ «ազնվական գերակշռմամբ», որը նաև ի հայտ է գալիս նշանակալի թվով գյուղական բնակչության մեջ, ինչպես նաև ցեղային կազմավորումների մեջ Իրանի տարբեր մասերում (Չարմահալ-Բախտիարի, Ֆարս, Խորասան, Իսֆահան և այլն), որոնք չեն հանդիսանում թյուրքեր, և չունեն Ադրբեջանի (Ատրպատականի) հետ: Օրինակ, մաքուր իրանական ցեղային կոնֆեդերացիա (իլ) բասերի ունի իր կազմի մեջ և ցեղեր, որոնք խոսում են թյուրքերենով և նույնիսկ արաբերենով: Բնակչության այս կատեգորիան, սովորաբար, ուռճացված թվաքանակով, հասկանալի է, նույնպես միշտ ներառված էր Իրանի այսպես կոչված «ադրբեջանցիների» ընդհանուր թվաքանակի մեջ:

Ինչ վերաբերում է նրան, թե իբր Թեհրանի բնակչության մեծ մասը կազմում են «ադրբեջանցիները» (առաջարկվում են տարբեր թվեր՝ չորսից մինչև յոթ միլիոն), ապա այսպիսի պնդման ֆանտաստիկությունը ակնհայտ է առանց հատուկ հիմնավորման: Այդքան թվաքանակով «ադրբեջանցիներ» այնտեղ ուղղակի չէին կարող հայտնվել որևէ տեղից: Իրական գնահատականը՝ 500000-ից 1 միլիոն է, որոնք բնակվել են տարբեր ժամանակներում մայրաքաղաքում և ամբողջովին «տարալուծվել է» նրա մեջ: Ընդհանուր առմամբ, Թեհրանի բնակչությունը, որը ոչ մեծ քաղաք էր մինչև նրա

մայրաքաղաք հայտարարելը XVIII դարի վերջում Աղա-Մուհամմադ խանի օրոք, ձևավորվել է երկրի տարբեր մասերից այնտեղ մարդկային հոսքի արդյունքում: Ընդարձակելով իր սահմանները, քաղաքն արդյունքում ներառել է մեծաքանակ հարևան բնակավայրեր, այդ թվում՝ Նարմաքը, Զարքեշը, Վանակը, Շեմիրանը, Թաջրիշը և այլն, որոնցում խոսում էին, ըստ ամենայնի, մազանդարաներենով, ինչպես, ընդ որում, Թեհրանի հյուսիսում և հյուսիս-արևմուտքում՝ Քարաջում (այսօր չորսմիլիոնանոց քաղաք), Ռուդեխենեում, Չալուսում, Ուշանում, Ֆաշամում և այլն, որոնցում այժմ իշխում է միայն պարսկերենը: Հենց Թեհրանում, նրա մինչմայրաքաղաքային շրջանի պատմության ընթացքում, ժողովուրդը, ամենայն հավանականությամբ, խոսում էր հարավթաթական բարբառներից մեկով կամ Ռազայի (Ռեյի) բարբառով, որը կենտրոնական-իրանական բարբառային կոնտինուումի տարատեսակներից մեկն է, որտեղ մտնում էին Ղումի, Սավեի, Արակի, Զասայի, Քաշանի և Իսֆահանի բարբառները:

Խոսել թյուրքոֆոնիայի այդքան նշանակալի տոկոսի մասին Իրանի Իսլամական Հանրապետության մայրաքաղաքում ուղղակի անհրաժեշտ չէ: Թեհրանի շուկայում թյուրքական խոսքի վիճահարույց արձագանքները, որտեղ վաճառում են հիմնականում տեղական արտադրության ապրանքներ կամ գյուղական մթերքներ Թավրիզի, Միյանեի, Մարանդի, Մարաղայի և այլ առևտրականներ, և խանութներում, որտեղ հյուրասիրում են իրենց հաճախորդներին հատուկ բնաբական քյաբաբով՝ աղացած մսով, կամ թավրիզական քյուֆթայով, ըստ ամենայնի, ոչ բավարար ապացույցներ են Թեհրանում հյուսիսարևմտյան նահանգների բազմամիլիոն բնակչության առկայության մասին: Ընդ որում, խոսակցական թյուրքական լեզվի կրողները շուկաներում և ավանդական պանդոկներում, որպես կանոն, մայրաքաղաքի մշտական բնակիչները չեն, այլև մարդիկ, որոնք եկել են ժամանակավոր աշխատանքի համար:

Սովորելով ընթերցողի խիստ ոճին, մեր ճանապարհորդությունը Թեհրանի շուկայով և պանդոկներով կապված քննարկվող խնդրի հետ, կարող է միանգամայն արդարացիորեն թվալ եթե ոչ քննարական շեղում, այլև բացահայտ ոչ տեղին ներդրում տեքստի մեջ: Ի վերջո, մի շարք եվրոպական քաղաքներում (չբացառելով Մոսկվան) այսօր կարող ես լսել թյուրքական (և ոչ միայն) խոսք, նույնպիսի

խոհարարական խանութներում, որտեղ տալիս են շաուրմա և քյաբաբ ավելի հաճախ քան Թեհրանում, և ոչ մեկը դրանից չի անում ժողովրդագրական, և, նույնիսկ, հեռուն գնացող քաղաքական եզրակացություններ: Այժմ հենց Երևանում են խոսում թյուրքերենով ինչպես շուկայում, այնպես էլ բազմաթիվ իրանական ազգային ռեստորաններով և խորտկանոցներում:

Բանն այն է, որ «Ադրբեջանական պրոեկտի» ամբողջ կառուցումը հիմնված է նման մանրամասների վրա: Կասկածելի կլիշեները, ինչպես «ամբողջ Թեհրանի շուկան ադրբեջանցիների ձեռքում է», «ամբողջ առևտրական և ռեստորանային գործերը տնօրինում են ադրբեջանցիները» և այլն, ահա հիմնական եզրակացությունները, որոնք կազմում են փաստարկների հիմքը Թեհրանի չորսից յոթ միլիոն «ադրբեջանական» բնակչության: Իրանական մայրաքաղաքի բնակիչներին ոչ-ոք և երբեք չի հաշվել լեզվական հատկանիշներով: Ուրիշ այլ փաստարկներ չկան և չեն էլ կարող լինել: Սակայն մի շարք կոնկրետ հատկանիշների հետ ես կարող եմ հստակ հաստատել, օրինակ, որ Քուրդիստան և Սիստան-Բելուջիստան նահանգից ծագողների թիվը Թեհրանում քիչ չէ հյուսիսարևմտյան նահանգներից, ըստ իրենց՝ «ադրբեջանցիների թվից»: Հայտնի է, որ դեռևս տաս տարի առաջ Թեհրանում ապրում էր մոտ 700000 սուննիներ, որոնք, իմիջիայլոց, բողոքում էին սուննիական մզկիթների բացակայությունից, և պաշտամունքի իրականացման և ուրբաթօրյա աղոթքների անցկացման համար հաճախ էին գնում մզկիթներ, որոնք գտնվում էին Պակիստանի և Աֆղանստանի տարածքներում: Քանի որ Իրանի սուննիական բնակչության հիմնական կմախքը բաղկացած է քրդերից, բելուջներից, նշված փաստը մեզ հիմք է տալիս ենթադրելու մայրաքաղաքում այս խմբերի առկայության մասին: Աֆղանստանից գաղթականները, հիմնականում խազարներն են, որոնք ինչպես մենք արդեն նշել ենք, շիաներ են: Թեհրանում «ադրբեջանցիներ»-ի հաշվման համար չկան և այդպիսի անուղղակի պահանջներ, ինչպիսիք են դավանաբանական պատկանելությունը, քանի որ նրանք բոլորը շիիզմի հետևորդներ են: Միգրացե կատակներ են, Թեհրանում «ադրբեջանցիներ» առանձնացնելու համար, բարբարի օգտագործելու հատկանիշը, քանի որ հայտնի է, որ Ադրբեջանից ծագողները շատ են սիրում այս տեսակի խմորեղեն: Հենց նրանք էլ հիմք են դրել XX դարի սկզբում առաջին փոերը հացի այս տեսակի արտադրության համար: Ադրբեջանից ծագողների

այս սերը բարբարիի հանդեպ նույնիսկ մտել է ասույթի մեջ: Սակայն, բարբարիի հանդեպ հավասարապես սեր տածեցին նաև մայրաքաղաքի բնակիչների այլ կատեգորիաները և ընդհանուր առմամբ իրանցիները: Այնպես որ, այս հատկանիշը նույնպես տեղին չէ:

Այսպես, մեր կողմից թյուրքախոսների հիմնական գծերը սահմանելուց հետո, այսինքն, բացահայտեցինք, որ ոչ բոլոր թյուրքական բարբառներով խոսողներն են «աղբբեջանցիներ», եկել է ժամանակը բացահայտելու վերջիններիս Իրանի Իսլամական Հանրապետությունում մոտավոր, գոնե օբյեկտիվ թվականակին մոտ ցուցանիշ:

Սկզբում «աղբբեջանցի» տերմինը սահմանենք, որը նշանակում է Աղբբեջանի տեղաբնիկ, այսինքն՝ Ատրպատականի, որը Իրանի հյուսիսարևմտյան ծայրամասային շրջանն է, և ներկայումս բաժանվում է, համաձայն երկրի ներկայիս վարչական բաժանման, հինգ նահանգների: Ինչու իրանական Աղբբեջան նահանգի անվանումը հանկարծ Արաքս գետով անցավ հյուսիսի և դարձավ Սովետական հանրապետության, իսկ այնուհետև անկախ պետության անվանում, սրանք հարցեր են որոնց կվերադառնանք քիչ անց: Այժմ մնալով Իրանի սահմաններում, անցում կատարենք 2006 թվականի նահանգների պաշտոնական տվյալներին: Դրանք համեմատաբար հստակ թվեր են, քանի որ տվյալ դեպքում իշխանությունները պատճառ չունեն կեղծելու ազգաբնակչության թվաքանակը իրենց սեփական երկրում: Այսպես ահա, բերենք նշված հինգ հյուսիսարևմտյան նահանգների տվյալները, որոնց տարածքում ապրում են «աղբբեջանցիները»: (Երկրի մնացած մասերում, ինչպես մենք տեսանք, «աղբբեջանցիների» այդքան նշանակալի թիվ գոյություն չունի): Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ նշված հինգ նահանգներից ամենահարավում գտնվող Ղազվինը պատմականորեն չի մտել Ատրպատականի կազմի մեջ, իսկ նրա բնակչությունը մեծամասամբ պարկալեզու է:

Ըստ 2006 թվականի թվյալների Արդաբիլում ապրում է 1.228.155 մարդ, Արևելյան Ատրպատականում՝ 3.603.456, Արևմտյան Ատրպատականում՝ 2.879.459, Ջենջանում՝ 964.601, Ղազվին նահանգում՝ 1.143.200 մարդ: Այսպիսով, այս պոտենցիալ «աղբբեջանական» տարածքներում բնակչության ընդհանուր թիվը կազմում է 9.094.105 մարդ: Ապա, հաշվի առնելով, որ Արևմտյան Ատրպատականի բնակիչների

մոտ 70%-ը քրդեր են, (մոտավորապես 2 միլիոն), Ղազվինի կեսից ավելին խոսում են հարավ թաթական խոսվածքներով (Թաքեստան քաղաքը, բնակավայրերի խումբ, որն անվանվում է Բոլուք Չահրա և այլն) և պարսկերենով (մոտ մեկ միլիոն), կոնկրետ տոկոս են կազմում մնացած նահանգներում նաև քրդերը, ասորիները, հայերը, թալիշները, հարավային թաթերը (ոչ պակաս քան 500000), արդյունքում կստանանք հինգ միլիոն «աղբբեջանցիներ»։ Սա, ինչպես ցույց է տալիս բավականին պարզ և օբյեկտիվ վերլուծությունը, ավելի իրատեսական թվաքանակ է, սխալներ կարող են լինել միայն մի քանի հարյուր հազարի սահմաններում։

Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիները ինքնաճանաչողության հիմնական ձևը, ինչպես արդեն նշվել է, իրանին է, այսինքն՝ «իրանցի», որին հաճախ ավելանում է հստակեցնող բնորոշում ըստ բնակության վայրի՝ թեհրանի, «թեհրանցի», էսֆահանի «սպահանցի», համադանի «համադանցի», թաբրիզի «թավրիզցի» և այլն։ Բարբառային շրջանների բնակիչների համար հստակեցնող բնորոշում է ներառում բարբառային արեալի անունը։ Այսպես Գիլանի, Մազանդարանի և Գորգանի բնակիչների համար «շոմալի» (բառացի հյուսիսցի), Արդաբիլ նահանգի բնակիչների համար՝ արդաբիլի, Արևելյան և Արևմտյան Ատրպատականների համար՝ ազարբայջանի (քաղաքների ավելի մեծ բաժանումներով՝ թաբրիզի, մարանդի, միանեի, շաբեսթարի, մարագեի և այլն), քրդալեզու և լուրալեզու արեալների համար՝ համապատասխանաբար քորդ և լուր և այլն։ Ընդ որում տարածքային (մշակութային) ինքնաճանաչողության հիմք է հանդիսանում տեղական բարբառը։ Հենց որ ընտանիքը բնակվում է քաղաքում և կորցնում է իր մայրենի խոսվածքը, անցնում է պարսկերենի, արդեն հաջորդ սերունդը ձեռք է բերում երկրորդական ինքնաճանաչողության բնորոշումը ըստ նրանց նոր բնակության վայրի, պահպանելով, ընդ որում, տարածքային արմատների մասին հիշողությունը։ Մի շարք մարդիկ, ովքեր ծագում են հյուսիսարևմտյան նահանգներից, և ապրում էին Թեհրանում, արդեն հստակորեն բնորոշում են իրենց որպես իրանցիներ թեհրանցիներ։

Ասվածի հիմքում, ծայրահեղ միամիտ են երևում մի քանի քաղաքական «կանխատեսումները» և «ընդհանրացումները» Իրանի նկատմամբ, հետխորհրդային տարածաշրջանի համայնքների վերլուծական խորքերում, հիմնված իբր այս կամ այն

իրանկան գործչի «Էթնիկ հատկանիշների վրա»: Հիշում եմ երեք տարի առաջ մեծ իրաքանցում առաջացրեց այն փաստը, որ ընդդիմադիր «Կանաչ շարժման» առաջնորդ Միր Հոսեյն Մուսավին ծննդով Թավրիզի մետ գտնվող Խամեն գյուղից էր: Նրան միանգամից «ադրբեջանցի» կնքեցին, և այժմ սկսել են լրջորեն հաստատել, որ եթե նա անցնի իշխանության Իրանի քաղաքականությունը կդառնա «ադրբեջանական»: Ինչպես նաև նրանք շարունակեցին իրենց «վերլուծությունը», երկրի առաջնորդ Այաթոլլահ Սեյեդ Ալի Խամենեին չէ որ նույնպես ադրբեջանցի է, այսինքն կստացվի յուրահաստուկ «ադրբեջանական» տանդեմ: Եվ այս պատրանքը դեռ երկար ժամանակ զբաղեցնում էր վերլուծական եղբայրության խելքը, մինչև որ կրքերը չհանդարտվեցին Խամենեի կողմից ոչ թե իր համերկրացուն՝ «ադրբեջանցի» Մուսավինին, այլ՝ Մահմուդ Ահմադի Նեժադին մեծ օգնություն ցույց տալու արդյունքում, ով ծնունդով թեհրանական ծայրամասերից է՝ Շաբդոլազիմայից: Շատ շատերին, այդ թվում արևմտյան նախագծողներին Իրանի գունավոր հեղափոխության մեջ, ըստ երևույթին, անհայտ է այն հանգամանքը, որ տարածքային արմատները երբեք չեն եղել իրանական քաղաքականության գործոն:

Իրանական քաղաքգետների համար, անկախ նրանց ծագումից (օրինակ, ներկայիս Իրանի փոխնախագահ Ռահիմին քուրդ է) իրանական պետության առաջնահերթությունները երբեք չեն մղվել հետին պլան՝ ոչ մի տեղական շահերի պատճառով: Պետք չէ մոռանալ, որ մենք գործ ունենք կայսրության հետ, որն ունի գրեթե երեք հազարամյա շարունակական պետականության պատմություն, որտեղ քաղաքական գիծը, որը նույնիսկ կապված է երկրի ամբողջականության հարցերին, չի փոխվում նույնիսկ ամենախարիզմատիկ առաջնորդների փոփոխությամբ: Իսկ հյուսիս արևմտյան նահանգներից ծագողների համար անձնական շարժառիթները կամ կենսական առաջնահերթությունները պայմանավորված են նրանց ծագմամբ, կարող են արտահայտվել, գոնե այն երազանքով, որ Թուրքմենչայի պայմանագիրը պետք է վերանայվի, բայց ոչ ավելին:

Մի քանի բառ «թորք» տերմինի օգտագործման մասին («թյուրք, ով խոսում է թյուրքական խոսվածքով») Իրանում: Այս տերմինը, ինչ-որ շրջանային պիտակ է հյուսիսարևմտյան նահանգների բնակչության համար, որոնք կենցաղում խոսում են թյուրքական բարբառներով, որոնք կիրառվում էին միայն XX դարի երկրորդ կեսից:

Ավելի վաղ այս շրջանների բնակիչները, անավստիստ էին, ինչպես միշտ՝ ըստ բնակության վայրի: Բայց վերջին շրջանում փոփոխություն է տեղի ունեցել իրանական կոմունիստների շնորհիվ, այդ թվում, 1945 թվականից հետո կուսակցության մեջ աղանդների առաջացման և այսպես կոչված «ադրբեջանի դեմոկրատական ֆրակցիայի» (Ֆերդեյե դեմոկրատե Ազերբայջան), որը ամբողջովին գտնվում էր սովետական Բաքվի ազդեցության տակ: Նույն տարվա դեկտեմբերին կուսակցությունը հայտարարեց «Իրանական Ադրբեջանի դեմոկրատական կառավարության» ձևավորման մասին, որը իշխանությունների կողմից ճնշվեց, ընդ որում տեղական բնակչության ակտիվ մասնակցությամբ՝ 1946 թվականի վերջին:

Չնայած XIX դարի վերջին XX դարի սկզբին նման հակասական դեպքեր բառաօգտագործման հանդիպում են գրականության մեջ, ընդ որում, թորք էթնոնիմը Իրանում, հատկապես Ադրբեջանում (Ատրպատականում), անվանում էին թուրք օսմաններին, սուննիներին, որոնք այս հողի վրա շատ աղետներ բերեցին, մինչև բնակչության զանգվածային ոչնչացում և ցեղասպանության գործողություններ, հատկապես XX դարի սկզբին, նրանց կողմից շրջանի օկուպացիայի տարիներին: Ընդ որում, այս տերմինը օսմանցիներին (օսմանլի) բնորոշելու համար հենց հանրապետական Թուրքիայում մտցվեց Քեմալ Աթաթյուրքի կողմից: Մինչև այդ թյուրքի (türk) նշանակությունը Անատոլիայում ստորացուցիչ պիտակ էր գյուղացիների, անքաղաքավարի և չկրթված մարդու համար:

Թուրք օսմանների հանդեպ ատելությունը, միշտ եղել է հյուսիսարևմտյան նահանգների («ադրբեջանցիների») բնակչության մտածողության մաս: Հատկապես այն արտահայտվել է իրանաօսմանյան հակադրությունների ժամանակ Սեֆյանների ժամանակ և ավելի ուշ: Միաժամանակ այսօրվա Իրանում թորքի նշանակությունը զրկված է կոնկրետ էթնիկական նշանակությունից: Այն ցույց է տալիս, կրկին որոշ չափով պեյորատիվ երանգով, միայն նրանց, որոնք անպրում են Իրանի (Ադրբեջանի) հյուսիսարևմտյան նահանգներում և կենցաղում խոսում են թյուրքերենով (թորքի): Այս տողերի հեղինակի անձնական փորձից օրինակը կարող է պատկերավոր ներկայացնել և այս իրականությունը, և ինքնաճանաչողության երկրորդական բնորոշման մասին հաստատումը բնակչության վայրի փոփոխության ժամանակ: Մի անգամ Թեհրանում Իրանական Մեջլիսի Ադրբեջանի պատգամավորներից մեկի

մասնավոր օրինակով, ուշադրություն դարձնելով, որ երեխաները միմյանց հետ շփվում են պարսկերենով, ես հարցրեցի տանտիրուհուն, թե արդյոք նրանք գիտեն թուրքերեն (թորքի), և որտեղից է նա ծագում: Ինչին տանտիկինը պատասխանեց. «Երեխաները արդեն թեհրանցիներ (թեհրանի) են, խոսում են պարսկերենով, իսկ ես գիտեմ թուրքերեն,- և շարունակեց,-Ման քե խոդամ թորք բուդամ (բառացի՝ Ես թորքուհի եմ եղել)». Պարզ է, որ «եղել եմ թորքուհի (թորք)» նշանակում է «ապրել եմ Ադրբեջանում» (իսկ այժմ ահա թեհրանցի է):

Այժմ տեսնենք, թե ովքեր են Իրանի «ադրբեջանցիները» և ինչպիսի ծագում ունեն նրանք: Ադրբեջանը հին իրանական տարածք է Իրանի հյուսիս-արևմուտքում (Միդիայի հյուսիսարևմտյան մասը): Նրա անվանումը դասական նոր պարսկերեն Ադարբադագան/Ադարբայգան(*Ādārbādagān/Ādārbāygān*)-ի արաբականացված ձևն է, որը ծագում է միջին պարսկերեն Ատուրպատական (*Āturpātākān*, հայերեն *Atrpatakan*): Այն պատկանում է էթնոնիմների այն տեսակին, որոնք պատկանում են ենթադրյալ առաջնորդի անունից կամ նախնու էպոնիմից, այս դեպքում Ալեքսանդր Մակեդոնացու զորավարներից մեկի՝ Ատրոպատի (Ատուրպատ) անունից, որը մ.թ.ա. 320 թվականին այս շրջանում առաջին անգամ ստեղծեց անկախ խոշոր պետություն: Սասանյանների շրջանում Ատրպատականը առաջին անգամ հանդես է գալիս որպես առանձին նահանգ, որը միապետի անունից ղեկավարում էին մարզպանները (սատրապները): Ատրպատականը Իրանի գլխավոր կրոնական կենտրոններից էր, այստեղ Շիզե քաղաքում (այժմ Թախթե Սուլեյման) գտնվում էր երեք «Սուրբ կրակներից» առաջին Աթուր Գուշնասպի երկրի: Առանձին պատմական շրջաններում, շրջանի արաբական նվաճումից հետո (639-643 թթ.) և ավելի ուշ թուրքերի ներխուժումից հետո (XI-XII դարերում) Ադրբեջան նահանգը միացավ Արանի և Շիրվանի (ներկայիս Ադրբեջանի Հանրապետության տարածքը) և Հայաստանի հետ, որը պատճառ է հանդիսանում Ադրբեջան հասկացողության ընդարձակ բացատրության համար որոշ միջնադարյան աղբյուրներում: Այնուամենայնիվ արաբ աշխարհագիրները միշտ հստակ տարբերակում են Ադրբեջանի տարածքը և նրան հյուսիսում սահմանակից Արրանն ու Հայաստանը: Նրանք Ադրբեջան նահանգը բաժանում են երկու վարչական շրջանների՝ արևմտյան՝ Մարաղա կենտրոնով, և արևելյան՝ Արդաբիլ կենտրոնով (հայ. *Artawēt*). Որը երկար

ժամանակ նահանգի ամենանշանավոր բնակեցված վայրն էր: Ավելի ուշ շրջանում, սակայն Արդաբիլի տեղը զբաղեցնում է Թավրիզը (հայ. Dawrēž):

Ադրբեջանի բնակչությունը, մինչ թյուրքական ցեղերի ներթափանցումը բացառապես իրանալեզու էր: XII դարի կեսից թյուրքերը աստիճանաբար սկսում են բնակվել Ադրբեջանում և նրան հարակից հյուսիսային շրջաններում Անդրկովկասի՝ նրանց նախնիների համար հարուստ արոտավայրերով: Արդյունքում, արդեն XVI դարի սկզբին, այս շրջանները, բացառությամբ Հայաստանի դառնում են նշանակալիորեն թյուրքալեզու: 1502 թվականից Ադրբեջանը հենակետ է դառնում նոր ձևավորված իրանական Սեֆյանների պետության համար, ովքեր ծագում են Արդաբիլից և խոսում էին տեղական իրանական ազարի բարբառով, որը Ադրբեջանի բնակչության հին լեզուն է, որը պահպանվել է մինչև XVI դարը, և գտնվում էր մոտ ազգակցության մեջ մերձկասպյան իրանական բարբառների՝ թալիշերենի, հարավային թաթերենի, գիլաներենի, մազանդարաներենի, գուրանիի և զազաերենի հետ: Ըստ ավանդության դինաստիայի հիմնադիր Շեյխ Սաֆի ադ-դաին Արդաբիլին իր մայրենի լեզվով գրել է բանաստեղծություններ: Ազարի լեզուն կամ ըստ արաբ պատմագիր Մասուդիի՝ ալ-ազարիյան, միավորում էր, ըստ երևույթին, մեծ թվով բարբառներ (հենց Մասուդիի հաստատմամբ 70, որը, ամենայն հավանականությամբ, չափազանցություն է): Ըստ երևույթին, այս բարբառների կոնգլոմերատը այդպես էլ չվերածվեց մեկ միասնական լեզվի, և անհետացավ պատմական ասպարեզից: (Այս ձևով գոյություն ունեւ հին կովկասյան ալբանների լեզուն: Հենց այս համակարգով է գործում նաև ներկայիս քրդերի լեզուն՝ բարբառների զանգված, բավականին առանձին և միմյանցից ամբողջովին հեռու): Այս լեզվական կոգյակների մի մասը, որոնք հայտնի են հարավ թաթական ընդհանուր անվանմամբ, դեռևս գոյություն ունի Ադրբեջանում:

Անուղղակի պատմական տվյալների հետ ազարի լեզվի մասին պահպանվել են ուղղակի տեքստային վկայություններ, մեջբերումներ (հիշատակումներ) ստեղծագործություններում՝ գրված պարսկերենով, բանաստեղծական ստեղծագործությունների օրինակներում, այդ թվում տասնյակ բանաստեղծական հատվածներ՝ վերագրված Շեյխ Սաֆի ադ դինին՝ Սեֆյանների հիմնադրին: Նշված տեքստերը, որոնք անվանվում են ֆահլավյաթ-ե ազարի, կապված պատմական բարբառագիտության տվյալների հետ, որոնք թույլ են տալիս հստակությամբ որոշել

այս անհետացած իրանական բարբառի տեղը նրան շրջապատող մոտ ազգակից խոսվածքների կոնտեքստում: Ժողովուրդը, որը խոսում էր այս լեզվով, նույնպես կոչվում է ազարի (ādarī), տերմին, որը հանդես է գալիս որպես ածականի –ի վերջածանցով և ազար-ով Ազա/երբայշան նահանգի անունի կրճատված ձևից: Բառը կարելի է թարգմանել որպես «աղբբեջանցի, աղբբեջանական»: Այն նաև օգտագործվում է այս շրջանի թյուրքական բարբառները անվանելու համար, ինչպես նաև՝ արդյունքում նրան մոտ գտնվող բարբառները՝ տարածված Արաքսից հյուսիս հարակից շրջաններում և վերջինիս վերաբերյալ: Սակայն որպես նախկին սովետական հանրապետության բնակչության էթնոնիմ ազարի (կամ ազերի) տերմինը, նախկինում երբեք չի կիրառվել: Այսպիսի բառաօգտագործումը միայն վերջերս է կիրառության մեջ մտել: Ռուսական սովորական խոսակցական լեզվում Աղբբեջանի Հանրապետության քաղաքացիների վերաբերյալ կիրառվող ազեր տերմինը և նրա նորմատիվ տարբերակ ազիկը «ազերբայջանեց» ձևի կրճատ տարբերակն է, որը ոչ մի կերպ կապված չէ ազերի տերմինի հետ նրա պատմական հարթության մեջ:

Իրանում Աղբբեջան նահանգի դեմոգրաֆիական պատկերը անգամ թյուրքերի ներխուժումից հետո չի կրել էական փոփոխություններ, բնակչությունը մնացել է նույն տեղում, միայն տեղի է ունեցել լեզվի փոփոխություն հենց նույն գծագրով, ինչպես Իրանի նախաարիական բնակչության լեզվական իրանիզացիայի դեպքում: X-XIV դարերի ճանապարհորդների մեծամասնությունը (Նասիր Խոսրովը, Մարկո Պոլոն, Իբն Բատտուտան) նշված շրջանում առանձնացնում են հիմնականում իրանական էթնիկական տարրը: Թյուրքական խոսվածքին անցնելը զանգվածային բնույթ կրեց միայն XVI դարից հետո:

Վերջերս իրանական գիտնական Վահիդ Ռաշիդվաշի կողմից (ծագումոց Մարաղայից) անցկացված մարդաբանական (կեֆալոմետրիկ) և գենետիկական ուսումնասիրությունները Աղբբեջանի բնակչության (Ատուրպատական), ցույց է տվել, որ Իրանի ազարիները, անկասկած, հանդիսանում են տեղի ավտոխտոն բնակչություն և գրեթե չեն տարբերվում մնացած նահանգային խմբերից երկրի, այդ թվում՝ պարսիկներից և քրդերից: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ նրանք

պատկանում են առաջավորասիական մարդաբանական տիպի գրացիլյան տարբերակի հարավ եվրոպական ճյուղին:

Ադրբեջանի իրանական ասորիբուցիայի ամենաբարձր ցուցադրական հատկանիշներից մեկը, շրջանի տոպոնիմիան, որը չհամարելով ուշ թյուրքական տարրերը տոպոֆորմանտներ՝ -լի, -քենդի, -պինար և այլն և մի շարք մոնղոլական անվանումներ (օրինակ, Սային, այժմ Շային-դեժ և այլն), ամբողջովին իրանական է, ընդ որում, բավականին արխայիկ բնույթի, ինչպես, օրինակ, Մարանդի մոտ գտնվող Harzand բնակավայրի անվանումը, որը, ինչպես ինձ թվում է, ծագում է հին իրանական *arya-zantu- ից, այսինքն՝ «(բնակավայր, բնակեցված) արիական ցեղերով»:

Հասկանալի է, որ եթե Թավրիզ և Արդաբիլ քաղաքների անունները ունեն միանշանակ իրանական ստուգաբանություն, ուրեմն ակնհայտ է, որ այս վայրերի բնակչությունը, հին ժամանակներում չէր կարող լինել թյուրքական: Ենթադրվում է, թյուրքական խոսվածքը այստեղ է բերվել ավելի ուշ, իսկ այս քաղաքների բնակչները բոլոր մյուս հատկանիշներով իրանցիներ են, կամ, ավելի շուտ տարածքի տեղաբնիկներն են, որոնք պատկանում են նախաիրանական էթնիկ կորպուսին Իրանական բարձրավանդակի հյուսիս-արևմտյան շրջաններին: Տեղական տոպոնիմիան, իսկապես, հաստատում են այս ճշմարտությունը և նրանում առկա ուրարտական տարրերը, որոնք սահում են հզոր իրանական տոպոնիմիկական շերտում: Օրինակ, փոքրիկ Ուսկու քաղաքի անվանումը (կամ Օսկու), որը գտնվում է արտացոլված հարավարևելյան Թավրիզի Սախանդ լեռան հյուսիսային ստորոտում, արտացոլված Արգիշթի Առաջինի Խորիսորյան Աշքայաի տարեգրության մեջ, կամ Ուշնուն, ուրարտական արձանագրությունների Wiše-ն, ինչպես նաև այնպիսի տոպոնիմներ, ինչպիսիք են Սիս (Sīs), Սիվան (Sīvān), որոնք չունեն բացահայտ իրանական ստուգաբանություն, և այլն:

Բիլա-սուվար (Bīla-suvār), բնակավայրի անվանում Արդաբիլի մոտ և նահանգի անուն հյուսիսային Թալիշիստանում (Ադրբեջանի Հանրապետությունում), որը ընդգրկում է Մուղանական հարթավայրի հարավային և հարավարևմտյան մասը: Տեղանվան երկրորդ մասը պարզ է՝ «հեծյալ» պարսկերենով, իսկ առաջին մասը՝ անհասկանալի է (դժվար թե թյուրքական bela-ն լինի «այսպես, այսպիսով», «այսպիսի հեծյալ»): Եվ

բաղադրիչների նշանակությունը, ընդհանուր առմամբ, մնում է անհասկանալի: Պարզ է, որ մենք գործ ուենեք թյուրքական ադապտացիայով ավելի վաղ իրանական տոպոնիմի հետ: Անվան սկզբնական ձևը, թվում է պետք է լիներ *Pīla-suvār «(զյուղ կամ բնակավայր, տարածք) մեծ հեծյալի», որպես պատվավոր մականուն ինչ-որ հերոսի կամ առասպելական կերպարի: pīl(a) (pūl(a)) «մեծ, հզոր» չի կարող բացատրվել իրանականի հիմքում, այն պատկանում է կասպիական արեալի սուբստրատային բառապաշարին, և հիշատակված է գրեթե բոլոր բարբառներում մեր կողմից վերակառուցված մերձկասպյան ատրպատականյան լեզվական միության մեջ մտնող՝ զազաերենում (կենտրոնական Թուրքիայում, Պակիստանից վերաբնակիչների լեզուն), թալիշերենում, գիլաներենում, հարավ թաթական խոսվածքներում և այլն: Անկասկած, այն գոյություն ուներ նաև հին դելեմների՝ զազաների լեզվում: Այս անունը նաև հիշատակված է շրջանի ջրանունների մեջ (տես, օրինակ, Pūlarūd, «մեծ գետ» Գիլանում, Ռուդսարի շրջանում):

Նախաիրանական, այդ թվում խուրաուրարտական տեղանվանագիտությունը տարածաշրջանում, այդ թվում Ատրպատականում, ինչքանով ինձ հայտնի է, մինչև այժմ չի եղել հատուկ հետազոտության օբյեկտ: Այդ նույնը վերաբերում է Խար-Խար, Գար-Գար և այլ տիպի սուբստրատային էթնոտոպոնիմների և հիդրոնիմների ուսումնասիրությանը՝ հիշատակված դեռևս Մինորսկիի կողմից: Բավական է նշել, որ, ընդհանուր առմամբ, Գ. Ա. Գեյբուլլանի աշխատությունում տեղանունների այս շերտը Արրանի և Շիրվանի տարածքում ընդհանրապես չի դիտվում:

Ինչ վերաբերում է անդրկովկասյան թյուրքալեզու հանրապետությանը (Ադրբեջանի Հանրապետությանը), որը ադրբեջանցիների կողմից անվանվում է նրանց երկրի պաշտոնական անվանումով, այս ոչ վաղ պատմությունն էլ է լավ հայտնի:

Անդրկովկասյան Արրան և Շիրվան շրջանների վերանվանումը «Ադրբեջան», որոնք մտնում էին հին Ալբանիայի կազմի մեջ, և ավելի ուշ կազմում էր մինչև տարածքի խորհրդայնացումը Բաքվի նահանգապետության և Անդրկովկասյան շրջանի Ելիզավետապոլյան նահանգապետության մաս, տեղի է ունեցել 1918 թվականի սեպտեմբերի 15-ին, Բաքվի թուրքական զորքերի կողմից օկուպացիայից հետո՝ Նուրի փաշայի գլխավորությամբ և Մուսավաթական կառավարության քաղաք հրավիրելուց հետո: Այս գործողության քաղաքական ետին պլանը ենթադրում էր

ապագայում նոր կազմավորված հանրապետության հետ իրանական Ադրբեջան նահանգի միավորումը: Սրա վերաբերյալ հետաքրքիր է ռուս արևելագետ Ակադեմիկոս Վ.Վ.Բարտոլդի պատասխանը Բաքվի համալսարանի ուսանողներից մեկին, իր կողմից ընթերցած դասախոսության ժամանակ, 1924 թվականի նոյեմբեր-դեկտեմբերին նշված հաստատության արևելագիտության ֆակուլտետում: Ուսանողի հարցը. «Ադրբեջան ասելով, շատ հաճախ նկատի են ունենում պարսկական Ադրբեջանը, Արաքսի այն կողմում, գլխավոր քաղաք Թավրիզով: Իրավունք ունենք մենք արդյոք մենք մեզ անվանել Ադրբեջան այս հարաբերությամբ, թե սա Շիրվանն է»: Ակադեմիկոս Վ.Վ. Բարտոլդի պատասխանը. «Շիրվանը երբեք չի օգտագործվել այս իմաստով, որ այն ընդգրկի ներկայիս Ադրբեջանի Հանրապետության տարածքը: Շիրվանը ոչ մեծ մասն է՝ գլխավոր Շամախի քաղաքով, իսկ այնպիսի քաղաքները, ինչպիսիք են Գանջան և այլն, երբեք Շիրվանի մեջ չեն մտել, և եթե անհրաժեշտ էր մտածել տերմին բոլոր շրջանների համար, որոնք այսօր միավորում է Ադրբեջանի Հանրապետությունը, ավելի շուտ պետք էր վերցնել Արրան անվանումը, բայց «Ադրբեջան» տերմինը ընտրված է, որովհետև երբ հաստատվեց Ադրբեջանի Հանրապետությունը, ենթադրվում էր, որ պարսկական և այս Ադրբեջանը կազմում են մի ամբողջություն»(ընդգծված իմ կողմից՝ Գ.Ա.), քանի որ բնակչության կազմով նրանք ունեն մեծ տարբերություններ: Այս հիմքով ընտրվեց «Ադրբեջան» անվանումը, բայց, անշուշտ, այժմ, երբ «Ադրբեջան» բառը օգտագործվում է երկու իմաստներով, շփոթմունք է առաջանում և ստիպված են լինում հարցնել, որ Ադրբեջանն է նկատի առնվում՝ պարսկական Ադրբեջանը թե այս Ադրբեջանը»:

Նորաստեղծ Ադրբեջանի մասին իր ժամանակ գրել է նաև Սալիտակ շաբժման առաջնորդներից մեկը՝ գեներալ Ա. Դենիկինը. «Ամեն ինչը Ադրբեջանի Հանրապետությունում արհեստական էր, «ոչ բնական», սկսած անվանումից, վերցրած համապատասխանաբար Պարսկաստանի նահանգներից մեկից; Արհեստական տարածքը՝ ընդգրկելով լեզգիական Զակատալները, հայ-թաթարական Բաքվի և Ելիզավետապոլի նահանգապետությունները և ռուսական Մուղանը, և միավորված թուրքական քաղաքականությամբ, որպես Կովկասում պանթյուրքիզմի և պանիսլամիզմի ֆորպոստ» (Очерки русской смуты):

Իսկական Ադրբեջանի անեքսիայի պանթյուրքիստական գաղափարը նրա միացման շնորհիվ համանուն հանրապետությանը հյուսիսում, սակայն ստացել է, կործանիչ հարված 1945-1946 թթ. իրանական Ադրբեջան նահանգում ստեղծված այսպես կոչված «Դեմոկրատական շարժման» ջախջախումով: Ադրբեջանում կարճաժամկետ պետությունն ստեղծելու փորձը այս նահանգի թյուրքալեզու բնակչության մեջ հակաիրանական տրամադրություններ առաջացնելու շնորհիվ, ամբողջովին բեմադրված էր Բաքվում այդ ժամանակվա ադրբեջանական ԽՍՀ-ի Կենտրոնական կոմիտեի կոմունսիտական կուսակցության առաջին քարտուղար Միրջաֆար Բագիրովի կողմից: Այս քաղաքական ակտը, որը չունեի իրական հիմք և հիմնված էր միայն նրա հեղինակների ավանտյուրիզմի վրա, չստանալով, ըստ երևույթին ժողովուրդի աջակցությունը, ի սկզբանե դատապարտված էր, սակայն այն հասցրեց արյունալի հետք թողել Իրանի ժամանակակից պատմության մեջ: Այս իրադարձության յուրահատուկ գեղարվեստական անդրադարձը սովետական իրականության մեջ կարելի է տեսնել Ա.Ի.Սոլժենիցինի մոտ. «Այդ ժամանակ, Օլենկան հիասթափությամբ խնդրեց զառամյալ իրանագետ պրոֆեսորին, նրա մոտ գրեց թեզ, և այժմ բարեհաջող ավարտած կլինեի, եթե թերթում չհայտնվեի Իրանական Ադրբեջանի մասին խնդիրը: Քանի որ Օլենկան չէր հետևել կարմիր թելով այս նահանգի հավերժական ներառվելը Ադրբեջանի (սովետական) մեջ և նրա օտար լինելը Իրանի համար (ընդգծված իմ կողմից՝ Գ.Ա.), թեզը վերադարձրեցին վերափոխման» (А. И. Солженицын, В круге первом):

Հարավային Կովկասի թյուրքալեզու կոնգլոմերատի էթնոագգային համախմբման գործընթացի առաջին ծիլերը, որոնք վերջնական արդյունքում հանգեցրին ժողովրդի ձևավորմանը «ադրբեջանցիներ» անվանումով, անկասկած, պատկանում էին XIX դարի երկրորդ կեսին: Մինչ այդ շրջանը կոնկրետ էթնոսի գոյության մասին խոսելը հստակ ինքնաճանաչողությամբ և ինքնագիտակցությամբ, բացի դավանաբանական հատկանիշներից (մուսուլման, նույնիսկ ոչ «թյուրքեր»), անհրաժեշտ չէ: Հատկանշական է, որ մինչև XX դարը այս շրջանի թյուրքալեզու բնակչությունը չունեի այլ նույնականացում բացի որպես «մուսուլմաններ», բավական է նայել անցյալ դարի առաջին քառորդի բնակչության մարդահամարը: «Ադրբեջանցի» հասկացողությունը բացակայում է նույնիսկ ԽՍՀՄ 1926 թվականի մարդահամարի մեջ:

Մի այլ հիմնալի օրինակ է Ուզբեկ Գաջիբեկովի «Լեյլի և Մաջնուն» օպերայի պրեմիերայի պաստառը (1908 թվականի հունվարի 12-ին) հատկանշական գրությամբ «օպերա մուսուլմանական լեզվով»:

Հետաքրքիր է, որ միաժամանակ իրանական (թաթեր, թալիշներ և քրդեր) և կովկասյան (ավարցիներ, լեզգիներ և ուդիներ) խմբերը, որոնք ապրում էին այս տարածքում, որոնք մուսուլմաններ էին (բացառությամբ ուդիների, որոնք դավանում էին հայկական քրիստոնեություն), ունեին հստակ ինքնաճանաչողություն և կոչվում էին համապատասխան էթնոնիմներով: Բացի դրանից, «մուսուլմաններ» տերմինի տակ ենթադրվում էին առաջին հերթին շիաները: Ընդ որում, ինչպես ես արդեն գրել եմ մի անգամ, որպես «թշնամական օտարերկրացիների» (այսպես կոչված Inimical Others), յուրաքանչյուր ինքնաճանաչողության բյուրեղացման համար որպես անհրաժեշտ գործոն այստեղ հանդես էին գալիս ոչ թե հայերը, այլև թուրք սուննիները (օսմանները):

Փաստացի, արևելյան Անդրկովկասի շիա թյուրքոֆոնների համախմբման գործընթացը սկսել է հենց Կովկասյան Ալբանիայի (Արբան և Շիրվան) պատմական շրջանների «Ադրբեջան» վերանվանումով, և ասպիսով նոր պետական կազմավորման ի հայտ գալով այս տարածաշրջանում: Մինչև այդ «Ադրբեջան» անվանումը երբեք չի օգտագործվել Արաքսից հյուսիս ընկած տարածքները անվանելու համար (տես նախորդ պարբերությունը):

Ժամանակի հետաքրքիր փաստաթուղթը, որը կազմված է վերանվանումից մի քանի ամիս հետո, ցույց է տալիս, թե ինչպիսի կրքեր են տեղի ունենում այս իրադարձության շուրջ և թե ինչպես է ընդունվել այն հենց Իրանում: Դա «Ջանգալ» թերթի խմբագրական հոդվածն է (որը լույս է տեսնում Գիլանում, Իրանում) 1919 թվականի փետրվարի 7-ից, յուրօրինակ կոչ-արձագանք Արաքսի հյուսիսում գտնվող մուսավաթական նոր կազմավորված Ադրբեջանի Հանրապետության անվանմանը: Հոդվածի անանուն հեղինակը, ավելի շուտ Ադրբեջան նահանգի տեղաբնիկ. Հայտնի է, որ Գիլանում Ջանգալիտյան շարժման ժամանակ (1912-1921), որը գլխավորում էր Միրզա Քուչեք-խան Ջանգալին, ընդ որում, նրա խմբագրության խորհրդի օրգանում («Ջանգալ» թերթի) կային մի շարք իրանական թյուրքախոսներ, որոնք հատուկ ցասումով հանդես էին գալիս հարազատ նահանգի անվան յուրացման դեմ: Իրանցի

հայրենասերներին հանգստացնելու համար, ինչպես պարզ է դառնում հոդվածի տեքստից, մուսավաթները ի սկզբանե շշուկներ էին տարածում արևելյան Անդրկովկասի Իրանին հետագա միացման մասին, չնայած պլանավորում էին ամեն ինչ հստակությամբ հակառակը:

Հեզնական երանգներով գրված հոդվածը հանդես է գալիս արևելյան առակի հայտնի պոլիթեով: Մի անգամ Մուլլա Նասրեդդինը հարևանից վերցնում է կաթսան և վերադարձնում է նրա մեջ փոքր կաթսայով, իբր նոր ծնված երեխայով: Հարևանը ուրախությամբ վերցրեց կաթսան «ավելացրածով»: Մի օր անց Նասրեդդինը կրկին վերցնում է կաթսան, բայց այս անգամ այն ընդհանրապես չի վերադարձնում՝ հայտնելով հարևանին, որ կաթսան մահացել է: «Այն ինչ կարող է ծնել,-ասում է նա,- մի օր, անկասկած, կմեռնի»: Ըստ հեղինակի, այս փոխաբերությունը արտացոլում է Անդրկովկասի իրավիճակը: Կաթսան իրանական Ադրբեջանն է, իսկ նրա երեխան՝ հյուսիսում նույն անունը վերցրած մուսավաթական հանրապետությունը: Մուլլա Նասրեդդինն էլ մուսավաթականների կառավարությունը:

Հետո հեղինակը պարզաբանում է (թարգմանությունը բառացի Գ.Ա.) «Ադրբեջանը Իրանի մարմնի կարևոր օրգաններից է, երկրի անբաժանելի մասը, հին պարսկիների տաճարը, Իրանի ամենահին իսկական նահանգներից, այսօր ունեցել է երեխա, կաթսան ծնել է երեխա: Մուսավաթը մեզ նվիրել է էակի՝ ընդլայնելով մեր Ադրբեջանի տարածքը: Կովկասի հարավային վիլայեթությունները, որոնք միշտ ունեցել են իրենց իսկական անվանումները, այսօր վերցրել են իրենց համար «Ադրբեջան» անվանումը: Ինչու՞: Ի՞նչ նպատակով: Սովորական թատրոն են բեմադրում և մեզ էլ ստիպում են նրանում մասնակցություն ունենալ: Ինչպիսի երջանկություն, ինչպիսի ուրախություն: Կաթսան երեխա է ունեցել: Եթե յուրացնելով Ադրբեջան անվանումը, մեր մուսուլման եղբայրները Կովկասի իրենց առջև խնդիր են դնում այս տարածքը միացնեն Իրանին, ուրեմն թող այդպես էլ ասեն, որ (Հարավային) Կովկասը Իրանի մասն է: Ինչի համար են այս խաղերը...

Մուսավաթների վկայությամբ. Բարեպաշտ եղբայրներ, դուք ցանկանալով խաբել մեզ, նախօրոք ասում եք, որ կաթսան երեխա է ունեցել, որպեսզի ժամանակի հետ խոսեն կաթայի մահվան մասին»:

Ինչ վերաբերում է «բաժանված ժողովրդի» մասին գաղափարին և Ադրբեջանի Հանրապետության և Իրանի հյուսիսարևմտյան նահանգների բնակիչների էթնոմշակութային միասնությանը, որը այդքան ակտիվորեն աջակցություն է ստանում այսօր, բավական է հենվել հանգուցյալ Բաքվի ակադեմիկոս Զիա Մուսևիչ Բունիաթովի եզրակացության վրա, ով ադրբեջանի Հանրապետության պատվիրված պատմագրության գլխավոր տեսաբանն ու արարիչն է: Իրան կատարած ուղևորությունից հետո Բաքու թերթին տված իր հարցազրույցում (1989 թվականի հոկտեմբերի 21ին) վերջինս խոսելով «իրանական ադրբեջանցիների» մասին, ստիպված էր հիասթափությամբ հաստատել. «Կրկին զգացի, որ լեզուների միասնությունը, դեռևս չի նշանակում ժողովրդի միասնություն»: Եթե «ադրբեջանական միասնության» գաղափարների այդքան հավատարիմ նվիրյալին բավական էր մի այցելությունը հյուսիսարևմտյան Իրան, որպեսզի հասկանա իրերի իրական դասավորվածությունը, ուրեմն օբյեկտիվ հետազոտողի համար իրավիճակը պետք է միանգամայն պարզ լինի:

Էթնոսների, ժողովուրդների և ազգերի ծագումն ու մարումը մշտական պատմական գործընթաց է: Ժողովուրդները չեն առաջանում էթնիկական միախառնման արդյունքում, այլ՝ սուբստրատա-սուպերստրատային շերտավորության արդյունքում, որոնք ենթադրում են ինչ-որ էթնիկ դոմինանտություն: Միջուկի ձևավորման այդպիսի դոմինանտ, կարող էր լինել, ավելի շուտ, ինչ-որ իրանական էթնիկ միջավայր (բացահայտ, կովկասյան խառնուրդով որպես սուբստրատային շերտ), որի վրա շերտավորվեց թյուրքական սուպերստրատը: Այս միջավայրը, ամենայն հավանականությամբ, եղել է հարավ արևմտյան բնույթի, պարսկերենի նման, նրա բեկորները, խուսափելով թյուրքականացումից, մինչև այսօր պահպանվել են իրանալեզու թաթերի տեսքով Ադրբեջանի Հանրապետության տարածքում (այսպես կոչված հարավային թաթերը նրանց չեն պատկանում, նրանք, ինչպես նշվել է, պատկանում էին «մարական» խմբին): Այժմ Ադրբեջանի Հանրապետության բնակչության էթնիկ ձևավորման գործընթացում որոշակի մասնակցություն են ունեցել, անկասկած, նաև ադստրատային (երկրորդական) էթնիկական տարրերը՝ հայկական, կովկասյան, և, ավելի ուշ՝ քրդական: Ինչ վերաբերում է պարթևներին, ալբանցիներին, և նույնիսկ մարերին, նրանք, նշված էթնիկական միջուկի ձևավորման

Ժամանակ արդեն վաղուց հեռացել էին պատմական ասպարեզից: Թյուրքական սուլթեստրատի գլխավոր ժառանգությունները, փաստացի, մնում է միայն լեզուն. Մարդաբանական-գենետիկական պլանում թյուրքական ինգրեդիենտի այս շերտը թողել է գրեթե աննշան հետք ադրբեջանական էթնոսի սոմատիկ արտաքինում: Խորհրդային շրջանի մարդաբան Լ.Վ. Օշանինի անցկացրած վերլուծության համաձայն, ըստ էպիկանտոսի առկայության տոկոսային հատկանիշի մոնոլոիդո ռասայի հիմնական բնույթով, որը յուրացվել է թյուրքական ժողովուրդների կողմից, առաջանում է հետևյալ պատկերը՝ (տղամարդկանց մոտ) դրոգների մոտ՝ 51%, դազախների մոտ՝ 22%, ուզբեկների մոտ՝ 11%, թուրքմենների մոտ՝ 6%, ադրբեջանցիների մոտ՝ 2% և ավելի ցածր, (կանանց մոտ) դրոգների մոտ՝ 83%, դազախների մոտ՝ 53%, ուզբեկների մոտ՝ 18%, թուրքմենների մոտ՝ 10%, իսկ ադրբեջանցիների՝ մոտ 0%: Ընդ որում, Թուրքիայի թուրքերի մոտ, երկու ցուցիչն էլ հավասար են զրոյի, այսինքն՝ այս ժողովրդի գենետիկ արտաքին տեսքում թյուրքական տարրերը ընդհանրապես բացակայում են:

Ընդհանրապես, ինչ է էթնոսը: Պարզ լեզվով ասած, այն ընդհանուր պատմական նույն ճակատագրով կապված մարդկանց հանրություն է, ովքեր հստակ գիտակցում են իրենց տարբերությունը մյուսներից, և ունեն միասնական ինքնաճանաչողություն և ընդհանուր մշակույթ այս բառի լայն իմաստով: Ընդ որում, ոչ սոմատիկ հատկանիշները (այսինքն՝ մարդաբանական բնութագիրը), ոչ լեզուն և ոչ էլ կրոնը չեն հանդիսանում որոշիչ գործոններ էթնոսի որոշման համար: Միասնական էթնոգենետիկական, լեզվական և մշակութային սուբստրատի հիմքում, կոնկրետ պատմական պատճառների ազդեցությամբ, կարող են առաջանալ տարբեր էթնոսներ, երբեմն նույնիսկ գտնվելով մշտական անտագոնիզմի մեջ միմյանց հանդեպ: Օրինակ՝ սերբերն ու խորվաթները, հրեաներն ու արաբները, ռուսներն ու լեհերը, կիրգիզներն ու ուզբեկները և այլն: Եվ, հակառակը, շատ խայտաբղետ էթնոլեզվական սուբստրատը կարող է առաջացնել միանգամայն այլ էթնոս, ձգտելով, ընդ որում, տեղական մշակութապատմական լանդշաֆտին միանգամայն օտար էթնիկ տարրին: Դրա վառ օրինակն են Անատոլիայի թուրքերը, որոնց մեջ, ինչպես մենք տեսանք, չկա «թյուրքական արյան ոչ մի կաթիլ», բայց ինքնաճանաչողությամբ, այս էթնիկական հանրությունը, իրեն համարում է թյուրքական աշխարհի պսակը:

Զուտ գենետիկորեն և, անկասկած, մշակութային հատկանիշներով, թուրքերը ամենամոտը կանգնած են բալկաններին և հայերին, բայց նրանց ազգային աշխարհայացքի հիմնական տարրը այսօր Կենտրոնական Ասիայի թուրքերի հետ ընդհանրության գաղափարն է, չնայած, բացի լեզուների ազգակցությունից, նրանց միջև ոչ մի ընդհանուր բան, համարենք, դրոշների և դագախների հետ չկա: Դրանք տարբեր արմատներ ունեցող ժողովուրդներ են:

Պարզ է, որ լեզուների ազգակցությունը (նույնիսկ ինքնությունը), միանգամայն բավարար չափանիշներ չեն ժողովուրդների ազգակցության և էթնիկ խմբերի որոշման համար:

Եվ դրանում, Զիա Բունյաթովը, անշուշտ, իրավացի էր: Հակառակ դեպքում, օրինակ, Տաջիկստանի և Իրանի քաղաքացիներին կարելի էր համարել ինչպես երկու պետությունների միջև «բաժանված» ժողովուրդ: Այդ նույնը կարելի է ասել նաև Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի տիտղոսակիր ժողովուրդների մասին: (Համոզված եմ, որ որևէ մեկը լուրջ չի ընդունի «մեկ ժողովուրդ երկու պետություն» կարգախոսը, հայտարարված պաշտոնական մակարդակով, բայց միանգամայն օտար և ադրբեջանցիների, և թուրքերի հասարակական գիտակցությանը: Ըստ երևույթին, խոսք չի կարող լինել ոչ միայն միասնական ժողովրդի, այլև ժողովուրդների մասին, որոնք իրար հետ կապված են բարեկամական հարաբերություններով և փոխադարձ վստահությամբ, եթե չլիներ Հայաստանի գործոնը, խորը անտոգոնիզմը և հակադրությունները այս երկու միանգամայն տարբեր էթնոսների միջև վաղուց ի հայտ կգար և ավելի հաշվենկատորեն:)

Եվ հասկանալի է, որ չի կարելի Իրանում ինչ-որ թուրքական բարբառով խոսող յուրաքանչյուրին անվանել «ադրբեջանցի» կամ «թուրք»:

Թվացյալ էթնոմշակութային միասնության մասին Թուրքիայի և Ադրբեջանի Հանրապետության տիտղոսակիր ժողովուրդների և Իրանի «ադրբեջանցիների» շատ լավ և օբյեկտիվորեն գրված է թուրքական հեղինակներ Չաղիր Ջեյհան Սուվարիի և Էլիֆ Կանջիի միանգամայն նոր հրատարակության մեջ՝ «Թուրքիա և Ադրբեջան. Ընդհանուր ծագման և մշակույթի առասպելի շուրջ» խոսող անվանմամբ:

Կարելի է արդյոք լրջորեն հաստատել, որ թուրքերն ու ադրբեջանցիները կազմում են միասնական և միատարր էթնիկ խումբ, հենվելով ընդհանուր ծագման, ընդհանուր

մշակույթի և ընդհանուր պատմական հիշողության մասին թեզիսի վրա, որը լայնորեն գովազդվում է ժամանակակից ադրբեջանաթուրքական հասարակական-քաղաքական դիսկուրսում: Արրանի և Շիրվանի պատմական բնակչությունը (այսինքն ներկայիս Ադրբեջանի Հանրապետության) և հյուսիսարևմտյան Իրանի թուրքալեզու բնակիչները, ատրպատականցիները (որոնք էլ հանդիսանում են իսկական ադրբեջանցիները), երկար դարերի ընթացքում, հատկապես Սեֆյան շրջանում, գտնվում էին մշտական թշնամական հարաբերություններում օսմանյան թուրքերի հետ: Այս խմբերը, այսինքն Ատրպատականի բնակչությունը (հյուսիսարևմտյան Իրանում) և հարավ-արևելյան Կովկասում (այսօրվա Ադրբեջանի Հանրապետության քաղաքացիները) և օսմանյան թուրքերը գտնվում էին ոչ միայն մշտական պայքարի մեջ իրար հետ, այլև երկու տարբեր՝ համապատասխանաբար շիական և սուննիական կրողները: Հետևաբար, «ընդհանուր պատմական հիշողությունը» այս ժողովուրդների կարող է պարունակել փոխադարձ թշնամանքի, պատերազմների և կոտորածի արտացոլանքներ...Ներկայիս Ադրբեջանի Հանրապետության ժողովուրդը երբեք չի եղել հավատարիմ թուրքերին և թուրքականությանը (Turkishness)...

Թուրքական պատմության դասագրքերն ու հոդվածները բացահայտ ցույց են տալիս, որ դարավոր անտագոնիզմը երկու թուրքալեզու էթնոսների (թուրքերի և ադրբեջանցիների) տարբեր պատմական, էթնիկական, մշակույթային և կրոնական սուբստրատներով և ձևավորված երկու առանձին աշխարհագրական միջավայրերում, դեռևս գոյություն ունեն այդ պատճառով հեռանկարներ ընդհանուր ազգային գաղափարախոսություն ստեղծելու համար, որը այդ ֆոնում երևում է միանգամայն անորոշ: «Միասնական ազգի», «երկու երկրների մեկ ժողովրդի», «եղբայրության» և այլնի մասին ընդհանուր կլիշեն, ավելի շուտ, ինչ-որ «օտարացման» (“Otherisation”) ցուցիչ է, ոչ ավելին:

Թուրքիան իր ինքնաճանաչողությունը դնում է թուրքական աշխարհի կենտրոնում: Թուրքերենը նույնպես զբաղեցնում է կենտրոնական դիրք, իսկ ադրբեջաներենը դեգրադացվում է թուրքական բարբառով, դառնալով, ընդ որում, կատակների և հումորի օբյեկտ: Թուրքական դասագրքերը պատկերում են Ադրբեջանը, ոչ թե որպես անկախ երկիր, այլև Թուրքիայից դիրքով ավելի ցածր կազմավորում:

Այդպիսի «եղբայրությունը», հիմնված մաքուր քաղաքական հաշվարկների վրա, ըստ երևույթին, չի կարող շարունակվել միշտ: Իրականությունը չէ որ փոխվում է, և անպայման դրա վերջն էլ կգա, հատկապես հայ-թյուրքական հարաբերությունների հարթեցումից հետո, որը գտնվում է Թուրքիայի տարածաշրջանային հետաքրքրությունների շրջանակում, որին մեծապես նպաստում են համաշխարհային քաղաքական ուժերի կենտրոնները:

КОНЦЕПЦИИ ИДЕНТИЧНОСТИ ТЮРКОЯЗЫЧНЫХ ИРАНЦЕВ

Геворг Аветикян

(Европейский Университет Санкт-Петербурга)

1. Вопросы выбора этнонима и определения «материнского государства»

азербайджанцев

Особенностью многих случаев этнического национализма внутри Ирана является то, что почти все они имеют своего рода собратьев по ту сторону государственной границы. Представители «братских» этнических групп могут говорить на одном языке, но отличаться в конфессиональной принадлежности (иранские арабы-шииты и арабы-сунниты в соседних арабских государствах). Они могут быть носителями одного языка (несмотря на возможные различия между диалектами на местном уровне) и религии, но проживать в двух или более государствах (хорошим примером являются белуджи, которые сосредоточены на стыке границ Ирана, Пакистана и Афганистана). Иранские арабы продемонстрировали свою лояльность иранской идентичности, а не этническим собратьям во время ирано-иракской войны (1980-1988), когда Саддам Хусейн тщетно надеялся на успех в арабоязычных районах Ирана.

Другим примером может служить туркменоязычное население северо-востока Ирана, рассредоточенное вдоль государственной границы Ирана с постсоветской Республикой Туркменистан. Как правило, при освещении процессов в современном Иране на этот регион почти не обращают внимания. Появление Туркменистана в качестве родного или, как оно чаще называется, *материнского* государства, вероятно, оказало какое-то влияние на туркменоязычных иранцев, но это не стало достаточно прочной базой для формирования идеи единой нации. Понятия «Туркменистан» и «туркменская нация» сами обязаны своим существованием советской политике

национального строительства и создания республик в Центральной Азии, когда едва ли не произвольно выбиралась «титульная нация» и ее название давало имя новой административно-территориальной единице¹.

Политика азербайджанского государства в отношении тюркоязычных иранцев неизменно старалась опереться на якобы научный, то есть «объективный», аргумент, что приводило и приводит к вторжению политики в область гуманитарных наук. Главным образом в военные периоды (Вторая мировая война и советская оккупация северо-западных провинций Ирана; арцахский (нагорно-карабахский) конфликт между постсоветской Арменией и Азербайджаном), такие споры доходили до отрицания того, что представители соответствующих групп готовы были признать в мирное время или при иных обычных условиях, а также до использования аргументов, вызывающих

¹²⁴ I. Aliyev, *Azerbaijan: Accomplishments and Challenges*. A Conversation with Ilham Aliyev, интервью проведено Brent Snowcroft, 26 апрель 2006 г., Council on Foreign Relations, <http://www.cfr.org/azerbaijan/azerbaijan-accomplishments-challenges/p34057>.

¹²⁵ Асатрян, *Этническая композиция Ирана*.

¹²⁶ Юнусов, «Азербайджанско-иранские отношения», 104.

¹²⁷ «Азербайджанская диаспора Швеции открывает собственный телеканал „Oyanish TV“, DAY.AZ, просмотрено 13 апрель 2015 г., <http://news.day.az/society/51108.html>.

¹²⁸ «EuroAZ TV», просмотрено 10 апрель 2015 г., <http://www.euroaz.tv/>.

сомнения в их научной корректности. Наука нередко использовалась в политическом противостоянии. Очевидно, что азербайджанская школа востоковедения и образовательные центры, которые проводили исследования в области гуманитарных наук, во многом унаследовали советские традиции.

Создание новой национальной идентичности, которая будет соответствовать интересам нового независимого государства, подразумевало и переписывание истории, изобретение новых традиций. Примордиальные взгляды на национальные и исторические вопросы были распространены как в советское время, так и в постсоветское. В случае постсоветского Азербайджана они также сыграли существенную роль при конструировании национальной идентичности, предоставляя вариант «разумной» истории, основанной на «фактах» и «логике», которые должны были утвердить картину мира, в которой азербайджанцы являются потомками автохтонных этнических групп, многие тысячелетия назад населявших территорию современного Азербайджана (и Южного, и Северного).

Факт наличия тюркоязычных иранцев в составе иранского общества в трудах современных азербайджанских историков и идеологов превратился в (прото) азербайджанскую нацию, согласно их мнению страдавшую и страдающую от персидского ига. Такие взгляды часто не учитывают, что описание прошлого с помощью современных терминов и установок национализма, в значительной степени полагающихся на данные и методы сравнительно-исторического языкознания, не всегда может адекватно отражать реалии предыдущих эпох: «Каджарские монархи, говорящие на собственном турецком диалекте со своими соплеменниками и на персидском с придворными служащими, восприняли бы языковое разнообразие (если бы они когда-либо размышляли об этом) как постоянный и неизменный факт жизни, налагаемый на человека Богом»¹²⁹.

Процедура выделения тюркоязычных иранцев из иранского общества и отождествление их с постсоветским населением Республики Азербайджан так же новы, как и само появление независимого азербайджанского государства. Многие авторы, как в Азербайджанской Республике, так и в других странах способствовали формированию

¹²⁹ E. Abrahamian, «Kasravi: The Integrative Nationalist of Iran», *Middle Eastern Studies* 9, вып. 3 (1 октябрь 1973 г.): 273.

дискурса, нацеленного на поиск древних исторических корней азербайджанской нации¹³⁰. В некоторых случаях принцип произвольного выбора собственной идентичности может быть проблематичен не только в рамках академических дебатов. «Свободный» выбор оказывается неотделим от территориальных споров, и зачастую даже сугубо исторические и филологические дебаты имеют шанс перерасти в вооруженное противостояние¹³¹. Необходимо подчеркнуть, что вновь возникающие национальные государства и националистические идеологии часто пишут исторический нарратив, выстраивая его в соответствии с актуальными требованиями создаваемой национальной идентичности, объединяя историю территории с историей людей, которые ее населяют в настоящее время. Как отмечает американский социолог Гарри Арутюнян, «современная форма нации предоставила случай... для сотворения «историчности территории» и «территориализации истории», как призвание и содержание национального нарратива»¹³².

Британский историк Энтони Д. Смит и ряд других авторов настаивают на корреляции политического курса страны и текущего образа этнической идентичности. Иными словами, изучая политическую ситуацию, можно понять, как и почему в данный момент меняется историографический мейнстрим¹³³. Переосмысление и тщательное изучение этничности и государственности не обязательно означает минимизацию их мощи или пренебрежение их значимостью, считает Роджерс Брубейкер, утверждая, что это бы скорее просто излагало «...их реальность, силу и значение по-другому»¹³⁴. Далее в своей работе Брубейкер пишет, что такие явления как этническая принадлежность, раса и государственность существуют, прежде всего, как «когнитивные перспективы»: «Вместо того, чтобы просто утверждать, что этническая принадлежность, раса и государственность сконструированы, они могут помочь определить, как они сконструированы. Они могут помочь определить, как и когда

¹³⁰ S. Rumyantsev, «„Ethnic Territories“ Presentation Practices in Historical Textbooks in Post-Soviet Azerbaijan and Georgia», *Internationale Schulbuchforschung* 30, вып. 4 (1 январь 2008 г.): 811–24.

¹³¹ Тишков, *Реквием по этносу*.

¹³² H. Harootunian, «Shadowing history: National narratives and the persistence of the everyday», *Cultural Studies* 18, вып. 2–3 (1 январь 2004 г.): 191.

¹³³ A. D. Smith, «Culture, Community and Territory: The Politics of Ethnicity and Nationalism», *International Affairs (Royal Institute of International Affairs 1944-)* 72, вып. 3 (1 июль 1996 г.): 446.

¹³⁴ Брубейкер, *Этничность без групп*, 8.

люди идентифицируют себя, воспринимают других, воспринимают мир и интерпретируют свои предикаменты расовыми, этническими или национальными, а не другими понятиями¹³⁵».

Очевидно, дело не только в попытках привязать современных жителей к территории, ранее известной как Албания, и провести линию родства от средневекового христианского населения региона. Проблема идентичности и вопрос о том, является ли население Азербайджанской Республики по происхождению кавказским, иранским или тюркским, постоянно обсуждались учеными и публицистами исходя из политической конъюнктуры.

Идея о разделенном 1828 г. по Туркманчайскому мирному договору между Российской империей и Персией азербайджанском народе на северный и южный впервые была популяризована советской политикой и наукой. Практически эту идею попытались применить после окончания Второй Мировой войны, когда на севере Ирана при поддержке советских войск была основана Азербайджанская Демократическая Республика.

В настоящем исследовании мы исходим из того, что идея об азербайджанской нации в среде закавказской тюркской интеллигенции начала складываться в конце XIX – начале XX вв. Советская власть, как и в других частях СССР, ускорила и усилила этот процесс, особенно после прихода к власти Сталина. С одной стороны, советская национально-культурная политика в Азербайджане была направлена на отсечение региона от общеисламского наследия, в связи с чем в 1937 г. был введен кириллический алфавит. Строго говоря, азербайджанцев как категории переписи до всесоюзной переписи 1936 г. не было: только тогда эта категория стала впервые фигурировать, до этого население записывали как «тюрок» или «татар». С другой стороны – особенно после Великой Отечественной войны (1941-1945) – советским руководством насаждался миф (в данном случае в это понятие не вкладывается никакого уничижительного смысла: при стечении геостратегических обстоятельств и проявлении политической воли ничего не помешает этому мифу обрести осязаемую реальность) о насильственном разделении азербайджанского народа на северный и

¹³⁵ Там же, 18.

южный и необходимости «восстановления исторической справедливости» (по аналогии с тем, как это было сделано с Украиной и Беларусью после совместного с Гитлером раздела Польши).

Впервые вопрос об истории «Азербайджана» был поднят сразу после образования независимой республики и обусловлен необходимостью демаркации границ. Первые проекты говорили о средневековых тюрках-сельджуках, но упор делался в первую очередь на мусульманский аспект идентичности, что позволяло в перспективе претендовать на населенные мусульманами районы южной Грузии¹³⁶. Другой проект, предложенный видным азербайджанским националистом и государственным деятелем начала XX в. М. Э. Расул-заде, совмещал в себе идею слияния тюркской и иранской идентичностей (на основании чего выводилась идея о федеративном устройстве будущего Азербайджана). При этом «туранский фактор» всячески преувеличивался вплоть до ретроспективной «тюркизации» Мидии.

Следующий толчок развитию «коренной» науки в Азербайджане был дан в 1920-х на фоне развития всех областей научного знания в СССР. Были созданы профильные подразделения Академии Наук, проводились археологические раскопки, но все это совершалось усилиями неазербайджанцев. В частности, значительный вклад в науку внес советский археолог И. И. Мещанинов. Целая когорта русских по преимуществу исследователей проявляла интерес в первую очередь к древнейшим этапам истории, в частности, к урартскому¹³⁷.

В 1934 г. был открыт Исторический факультет Азербайджанского государственного университета, что стало переломным моментом: союзная республика отчаянно нуждалась в собственных кадрах, то есть – в собственной версии истории, желательно – автохтонной¹³⁸. Необходимо было отделить азербайджанцев от прочих тюркских народов СССР, дабы избежать обвинений в пантюркизме, и от Ирана, чтобы не «нарваться» на ярлык панисламизма. Кроме того, тезис о «пришлости» азербайджанцев в условиях разворачивающихся сталинских репрессий и депортаций по

¹³⁶ Шнирельман, *Войны памяти*, 119.

¹³⁷ افشين زرگر, «روند دولت - ملت سازی در جمهوری آذربایجان», *فصلنامه سیاست خارجی*, вып. 4 (1388 г.): 983–1014.

¹³⁸ С. М. Алиев, «К вопросу об этногенезе азербайджанских тюрков», в *Тез. докл.*, под ред. М. Н. Губогло (3-й Конгр. этнографов и антропологов России, 8—11 июня, 1999, М., 1999), 388.

этническому признаку всех «некоренных» народов становился едва ли не залогом физического выживания¹³⁹. Доходило до того, что средневековых тюрков-кочевников с партийной трибуны объявляли «убийцами и бандитами»¹⁴⁰. Установка была дана протянуть родословную от оседлой Мидии. Фактически «азербайджанизации» подверглись любые этнические группы, проживавшие когда-либо на территории советского Азербайджана, а все нашествия (скифы, турки и т. п.) никакого заметного влияния не оказали¹⁴¹.

После войны, в 1946 г., была создана новая версия истории. На этот раз советские и «иранские» азербайджанцы «удревнялись» до Бронзового века, и к ним позже добавились албанцы¹⁴². Перед политически активными кругами Северного Ирана стояли благоприятные перспективы вхождения в Советский Союз, что сулило множество льгот – доступ к образовательным, политическим, рекреационным, культурным и т. п. ресурсам, чего никак не мог предоставить Иран того времени¹⁴³, что повлияло на их стремление войти в состав СССР, а советская азербайджанская наука, в свою очередь, включила тюркоязычных иранцев на севере страны в состав единого азербайджанского народа.

Популярность темы Кавказской Албании стала нарастать в 1950-1960-х гг., когда окончательно завершилась институционализация местной азербайджанской исторической науки. Под эгидой советского интернационализма выстраивалось азербайджанское национальное государство. В 1950-х советская наука столкнулась с тем, что версия о мидийском происхождении азербайджанцев выглядит уж слишком натянутой, и решено было найти более прочную опору в прошлом. Теперь связь с Южным Азербайджаном просматривалась гораздо отчетливее. Все государства, когда-либо функционировавшие на его территории, выстраивались в единый

¹³⁹ Шнирельман, *Войны памяти*, 132–133.

¹⁴⁰ Там же, 134; L. Tillett, *The Great Friendship: Soviet Historians on the Non-Russian Nationalities* (University of North Carolina Press, 1969), 142–143.

¹⁴¹ З. И. Ибрагимов и Е. Л. Токарежский, *Писатели и историки о мужестве и доблести азербайджанцев* (Баку: Азернешр, 1943), 20–27; З. И. Ямпольский, *Восстание Бабека: (Краткий очерк)* (Баку: АзФАН, 1941).

¹⁴² *Очерки по истории Азербайджана*, т. 1, Изв. АН АзССР. Отделение общественных наук (Баку, 1946), 27.

¹⁴³ Swietochowski, *Russia and Azerbaijan: A Borderland in Transition*.

последовательный ряд ранних форм азербайджанской государственности¹⁴⁴.

Сбалансированную версию азербайджанского этногенеза представил И. Г. Алиев. По его мнению, мидийский и албанский элемент участвовали в формировании азербайджанского народа, предшественником которого был народ *Атропатены*. И лишь поздние волны тюркских кочевых нашествий повлияли на язык¹⁴⁵.

Зия Буниятов был одной из самых заметных фигур в современных азербайджанских академических кругах и занимал должность вице-президента Национальной Академии Наук Азербайджана. Исследования древнейших времен составляли важную часть в конструировании локальных идеологий в союзных республиках. Обычно подобные исследования функционировали параллельно с политическими проектами под очевидным влиянием контекста межэтнических отношений в регионе. В южнокавказском контексте, например, эта тема приобрела большое значение с появлением вопроса об Арцахе (Нагорном Карабахе) прежде, чем конфликт перетек в вооруженную борьбу. Сказанное выше соответствует и идее Бенедикта Андерсона о том, что «...если национальные государства общепринято считать «новыми» и «историческими», народы, которым они дают политическое выражение, всегда выступают из незапамятного прошлого и проскальзывают в безграничное будущее»¹⁴⁶. По аналогии с этим можно указать процесс «азербайджанизации» «древних кавказских албанцев»¹⁴⁷ в молодой азербайджанской

¹⁴⁴ Гусейнов, *История Азербайджана: В 3 т.*

¹⁴⁵ И. Г. Алиев, «Роль мидийского элемента в этнической истории Атропатены», *Кавказско-Ближневосточный сборник*, вып. 8 (1988 г.): 19–26; *Очерк истории Атропатены* (Баку: Азернешр, 1989); К. Г. Алиев, «Этюды о населении древнего Азербайджана», в *К проблеме этногенеза азербайджанского народа*, под ред. М. А. Исмаилов (Баку: Элм, 1984), 40–68; также примером официальной сбалансированной точки зрения могут служить работы директора Института истории НАН Азербайджана: А. С. Сумбатзаде, *Азербайджанцы – этногенез и формирование народа* (Баку: Институт истории, востоковедения и центр научной информации АН АзССР, 1990).

¹⁴⁶ Андерсон, *Воображаемые сообщества*, 13–15.

¹⁴⁷ О смыслах и содержании топонима «Албания» и этнонима «албанцы» см.: А. А. Акопян, *Албания - Алуанк в греко-латинских и древнеармянских источниках* (Ереван: Издательство АН АрмССР, 1987). Как в случае с термином «азербайджанец», который зачастую употреблялся лишь как географическое определение, так же и «в Албанском царстве не произошло консолидации 26 племен в единый этнос, и политоним «албанцы» оставался их собирательным названием (как современные политонимы «индийцы», «югославы», «дагестанцы» и т. д.)», см.: А. А. Акопян, П. М. Мурадян, и К. Н. Юзбашян, «К изучению истории Кавказской Албании (но повоку книги Ф. Мамедовой «Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э. VIII в. н. э.)», в *К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении* (Ереван: Издательство Ереванского гос. университета, 1991), 330. Об этнонимах на территории Кавказской Албании см. также:

историографии. В результате азербайджанская идентичность приравнивается к Кавказской Албании или, по крайней мере, заявляет о строгой преемственности между ними, объясняя все тем, что и нынешние азербайджанцы, и некогда албанцы связаны с примерно одной и той же географической локацией. Были попытки обосновать аналогичные претензии и о связи между «Южным Азербайджаном» и Мидией, представляемой в качестве предполагаемого государства-предка, и таким образом оправдывать заявления о древности и автохтонности азербайджанцев, что они – потомки мидян и носители мидийского наследия. Помимо упомянутого Зии Буниятова среди азербайджанских историков¹⁴⁸ важную роль в деле национального строительства занимает историк Фарида Мамедова¹⁴⁹.

Буниятов отстаивает предположение, что кавказские албанцы – генетические предки современного азербайджанского народа¹⁵⁰. Томас де Ваал, в частности, писал об этом историке в своей известной книге, посвященной нагорно-карабахскому конфликту: «Достоинства теории Буниятова весьма спорны. Позднее даже выяснилось, что две статьи о кавказской Албании, которые он опубликовал в 1960 и 1965 гг., были прямым плагиатом. Он напечатал под своим именем, не указав авторство, переводы двух англоязычных статей, написанных западными учеными С. Ф. Дж. Доусеттом и Робертом Хьюсенем. Однако он преследовал, прежде всего, политические цели, в чем и преуспел»¹⁵¹. Параллельно с поиском мидийско-иранских и албанских корней в этногенезе азербайджанцев не забывались и тюркские¹⁵².

Следует отметить, что Буниятов был убит возле своей квартиры в 1997 г. всего через несколько лет после того, как Азербайджан стал независимым государством.

Առաքելյան Հ. Ս., «Աղվանական ցեղանունների համեմատական քննության փորձ» (Հանրապետական գիտական նստաշրջան. 1986-1988 թթ. ազգաբնական և բնագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքները: Ձեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1990), 7–10.

¹⁴⁸ К. Г. Алиев, *Кавказская Албания в I в. до н.э. – I в. н. э.* (Баку: Элм, 1974).

¹⁴⁹ Ф. Мамедова, *«История Албан» Моисея Каланкатуйского как источник по общественному строю раннесредневековой Албании* (Баку: Элм, 1977); Мамедова, *Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э. – VIII в. н. э.)*.

¹⁵⁰ Буниятов, *Азербайджан в VII–IX вв.*

¹⁵¹ T. Waal, *Black Garden: Armenia and Azerbaijan Through Peace and War* (New York: New York University Press, 2004), 152–153.

¹⁵² З. И. Ямпольский, «Об этногенетической непрерывности на почве Азербайджана», в *Вопросы истории Кавказской Албании*, под ред. И. Алиев (Баку: Издательство Академии наук Азербайджанской ССР, 1962), 32–43.

Анатолий Хазанов пишет о том, что он знает «...по крайней мере, четыре случая, когда антропологи в бывшем Советском Союзе стали жертвой убийства, по-видимому, потому что они выступали за политику, которая не устраивала некоторые крайне настроенные группы в соответствующих обществах»¹⁵³. Это указывает на то, насколько большое значение уделялось и до сих пор уделяется тому, что антропологи, историки и другие ученые, работающие в смежных областях, участвуют в политических дебатах. Эти направления исследований редко стояли вдали от политической повестки в СССР, и после образования независимых государств ситуация не изменилась, а скорее и ухудшилась.

Таким образом, в послевоенный советский период в азербайджанской исторической науке выделилось две так или иначе пересекающихся теории этногенеза азербайджанцев: через мидийцев и через кавказских албанцев. Нельзя не отметить, что обе теории значительно игнорировали роль ислама в истории региона, арабское завоевание описывалось в терминах оккупации и едва ли не национально-освободительной борьбы со стороны азербайджанцев. Также не шло речи и о роли Ирана (Персии), а государство Сефевидов, например, считалось азербайджанским государством, как и распространенный долгое время в средневековой Персии тюркский язык – азербайджанским. Такова была официальная установка партийной науки, отход от нее мог вызвать обвинения в панисламизме либо паниранизме. При Сталине, когда академическая наука в Азербайджане делала первые шаги и только-только институционализировалась, такие обвинения могли обернуться репрессиями. Позже, например, в период оттепели, происходило инерционное движение, никто не хотел рисковать своим положением – на всякий случай¹⁵⁴.

В 1980-х гг. после вспыхнувшей в Иране Исламской Революции в СССР воскресили идею «единого Азербайджана». В связи с этим был выпущен ряд работ, например, о раннесредневековом «антииранском» восстании Бабека (который из зороастрийца превратился в азербайджанского «национального героя» и «суфия»), по-другому осмысливалось арабское завоевание – как период единства Азербайджанов, и

¹⁵³ A. M. Khazanov, «Anthropologists in the Midst of Ethnic Conflicts», *Anthropology Today* 12, вып. 2 (1 апрель 1996 г.): 5.

¹⁵⁴ М. М. Соколов, «Рынки труда, стратификация и карьеры в советской социологии», *Экономическая социология* 12, вып. 4 (2011 г.): 37–72.

т. п.¹⁵⁵ Так или иначе, воспроизводился старый курс: Южный и Северный Азербайджан были разделены насильственно, но на самом деле это единое целое.

В 1960-1970-х гг. стало складываться «ревизионистское направление»¹⁵⁶ в изучении этногенеза азербайджанцев. Следуя постулатам советской теории этноса, ряд ученых придавал большее значение языку и настаивал на решающей роли тюркского элемента. Находясь на периферии исторической науки в СССР (поскольку оспаривало официальную точку зрения), «тюркистское направление» распространилось в перестройку и особенно после, став при Эльчибее едва ли не государственной идеологией. Разумеется, приобрел новое звучание также вопрос о Южном Азербайджане, занявший важное место в идеологии Народного Фронта. Хотя вопрос о «воссоединении» поначалу не ставился, речь шла о наращивании культурных и экономических связей¹⁵⁷. Исследователи стали «находить» следы тюрков на Ближнем Востоке, оставленные задолго до нашей эры. Надо отметить, что ревизионистское «тюркское» историографическое течение целиком состояло из молодых историков, не имевших громких регалий, а главное – академических постов. Их борьба за «новое слово в науке» была неотделима от чисто конкурентного соревнования за диспозиции в административной иерархии и социальные статусы, и трудно сказать, что для чего являлось причиной¹⁵⁸. Рискнем предположить, что именно эта структурная характеристика обеспечила такую популярность (пан)тюркистских идей в перестроечном Азербайджане: ореол оппозиционности удобно ложился в русло антисоветской идеологии, а простые академические функционеры, жаждавшие перераспределения постов, получили не только их, но и обрели образ борцов за национальное достоинство¹⁵⁹.

Дискурс о разделенных братьях – южных и северных азербайджанцах –

¹⁵⁵ З. М. Бунятов, *Государство атабеков Азербайджана (1136—1225гг.)* (Баку: Элм, 1978).

¹⁵⁶ Гейбуллаев, *К этногенезу азербайджанцев (историко-этнографическое исследование)*; В. Л. Гукасян, «Значение закавказских источников в изучении истории азербайджанского языка дописьменного периода», *Советская тюркология*, вып. 2 (1978 г.): 19–33; Исмаилов, *К проблеме этногенеза азербайджанского народа*.

¹⁵⁷ С. Рустамханлы, *Книга жизни* (Баку: Гянджлик, 1990).

¹⁵⁸ Шнирельман, *Войны памяти*, 185–188.

¹⁵⁹ О перипетиях постсоветской азербайджанской исторической науки см.:

«نقدی بر کتاب تاریخ دانشگاهی جمهوری آذربایجان», *کتاب ماه تاریخ و جغرافیا*, حسین احمدی, вып. 75–76 (1382 г.): 71–74.

сформировался в первой половине XX в. в СССР как инструмент внешнеполитических устремлений сталинского руководства. До революции 1917 г. и до начала эпохи национального строительства на обломках Российской империи радикальной интеллигенции ни среди закавказских тюрков, ни среди тюркоязычных иранцев не ставился вопрос о национальном единстве двух групп. Собственно, «двух групп» как таковых не было. Были минигруппы с локальными идентичностями. Конечно, как сказано выше, контакты и взаимное влияние были: львиную долю промышленного пролетариата в Баку и окрестностях составляли тюркоязычные иранские трудовые мигранты. Находясь там на заработках, они не могли не испытывать влияние националистических и социалистических идей и, возвращаясь домой, включались там в политическую борьбу. Что, впрочем, не мешало тюркоязычным иранцам на определенном этапе осознавать свою самостоятельность и «несводимость» к «азербайджанскому единству». Они строили свои партии, писали свои политические программы и даже революционное государство в начале 1920-х гг. на территории северного Ирана они предпочли назвать не Азербайджан, а Азадистан.

Наличие общего языка у двух групп было основательно политизировано после Второй Мировой войны, когда советские войска стояли в северном Иране, и на повестке дня было создание там независимой просоветской республики с перспективой присоединения к СССР. В дальнейшем советская пропаганда хоть и в мягкой форме (с помощью радиовещания), но продолжала воздействовать на население северного Ирана. Ключевой перелом случился в годы перестройки, когда в числе новых политических игроков оказался независимый Азербайджан. Пришедший к власти националистически политик Эльчибей сделал ряд резких заявлений о «единстве азербайджанского народа». Сменившие его Алиевы по сей день используют карту «Южного Азербайджана» как рычаг давления на тегеранское правительство: вновь поднимают этот вопрос, когда хотят добиться каких-то политических выгод.

Как это часто бывает, на службе у политиков оказалась наука. Все политические декларации сначала Советского Союза, а затем и Азербайджанской Республики неизбежно сопровождаются ссылками на многочисленные научные труды, доказывающие этно-историческое единство населения Азербайджана и северного

Ирана.

Анализ политического курса СССР и Азербайджана в XX в. и научного дискурса о «Южном Азербайджане», сформировавшегося в советской и постсоветской науках, показывают условность тезиса о «единстве азербайджанского народа»: мы видим, как это единство конструировалось по заказу правящих кругов и пропадало с политической повестки в зависимости от требований текущего момента и международной конъюнктуры.

ԹՈՒՐՔՄԵՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ.

«ՕՂՈՒԶ-ՆԱՄԷ», «ԹՈՒՐՔՄԵՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»

Վիկտորիա Առաքելովա

Քրիստինե Գրիգորյան

Իրանագիտության կոլկասյան կենտրոն

Ինչպես յուրաքանչյուր ազգի, այնպես էլ թուրքմենների հոգևոր մշակույթի և ինքնագիտակցության կարևորագույն տարրերից է ժողովրդական բանահյուսությունը: Դարեր ի վեր սերնդեսերունդ է փոխանցվել բացառիկ նշանակություն ունեցող, տվյալ էթնիկ խմբի ծագումնաբանությանը վերաբերող ազգագրական նյութեր, տարաբնույթ ավանդազրույցներ և առասպելներ: Տվյալ պարագայում մեծապես կարևորորվում են նաև թուրքմենական տարատեսակ ցեղային միությունների տոհմաբանությունները, որոնք թուրքմենական յուրաքանչյուր ցեղի ծագմանն ու հետագա զարգացումների պատմությանը վերաբերող բազմաբովանդակ տեղեկություններ են պարունակում: Զուգահեռաբար, առանձնակի ուշադրության են արժանի տարբեր սովորույթներ և կրոնական ծիսակարգեր, որոնք հասկապես տարածված են եղել այս ժողովրդի շրջանում դեռևս հին ժամանակներից:

Օղուզ-թուրքմենական վաղ շրջանի ժողովրդական ավանդազրույցների և գրավոր սկզբնաղբյուրների համաձայն Օղուզ-խանն է հանդիսանում բոլոր թուրքմենների նախահայրը: Վերջինիս վերաբերող առավել վաղ շրջանի առասպելական պատումները, որտեղ դեռևս պահպանված են նախախլամական հավատալիքային պատկերացումներին վերաբերող տարրեր, գրի են առնվել մոտավորապես XIII-XIV դարի կարլուկ-ույդուրական ձեռագրում՝ «Օղուզ-նամե»-ում, որը ներկայումս պահվում է Փարիզի Ազգային գրադարանում (Bibliothèque Nationale):¹⁶⁰ Հետագայում, Օղուզ-խանի մասին ավանդազրույցները վերամշակման են ենթարկվել ուշ միջնադարյան շրջանի հեղինակների կողմից՝ Ռաշիդ ադ-Դին (XIV դար), Աբու-լ-Ղազի (XVII դար), որոնց տարբերակներում, համապատասխանաբար,

¹⁶⁰ Кононов 1958: 84.

իրադարձություններն ներկայացված են արդեն իսլամական ավանդույթների և պատկերացումների հետ համաձայնեցված:

Ինչպես հատուկ է յուրաքանչյուր հերոսի, Օղուզ-խանի ծննդյան վերաբերյալ ևս կան տարատեսակ առասպելական պատումներ: «Օղուզ-նամե»-ի ույղուրական տարբերակի համաձայն նրա մայրը հղիացել է լույսի շողերից, իսկ Օղուզ-խանի արտաքին նկարագրությունը համընկնում է հին թյուրքական դեռևս կռապաշտական հավատալիքների հետ՝ «ոտքերը նման էին ցուլի ոտքերի, մեջքը՝ գայլի էր, ուները՝ սամույրի, իսկ կուրծքը՝ արջի»:¹⁶¹ Այստեղ հիշատակվում է նաև մոխրագույն գայլը, որը Օղուզ-խանի օգնականն էր, զորքին ճանապարհն էր ցույց տալիս, հաղթանակ էր բերում նրան, ինչպես նաև հասկանում էր մարդկային լեզուն:¹⁶² Կենդանիների, հատկապես գորշ գայլի պաշտամունքը լայնորեն տարածված է եղել հին թյուրքական ժողովուրդների շրջանում, և այս պաշտամունքի վերապրուկները մինչ օրս պահպանվում են տարաբնույթ ժողովրդական հավատալիքներում, ավանդույթներում, նույնիսկ հեքիաթներում ու տարբեր առասպելներում:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն դրվագը, որտեղ նկարագրվում է Օղուզ-խանի ամուսնությունը, որը արդեն ավելի ուշ շրջանի տարբերակներում, ենթարկվելով մշակման և ամբողջովին համապատասխանեցվելով մուսուլմանական գաղափարախոսությանը, բոլորովին այլ կերպ է ներկայացվում: Ըստ ավանդության նա իր առաջին կնոջը գտել է երկնքից իջած լույսի շողերում և նրանից երեք որդի ունեցել, իսկ երկրորդ կնոջը նա տեսել է որսի ժամանակ, մի լճի շրջակայքում գտնվող հաստաբուն ծառի փչակում: Երկրորդ կնոջից ևս ունեցել է երեք որդի: Առաջին՝ երկնային կնոջից ծնված որդիները ստացան *բոզուք* անվանումը, մյուս՝ երկրային կնոջից ծնված որդիները՝ *ուչուք*:¹⁶³ Նշված անվանումներին կանդրադառնանք ստորև: Այս դրվագում լավագույնս արտահայտված են հին թյուրքական աշխարհընկալման առավել հին ժամանակաշրջանին վերաբերող հիմնարար սկզբունքները, որոնցում առանցքային են եղել երկրայինի և երկնայինի մասին պատկերացումները:

Միջնադարյան իսլամական գրավոր հուշարձանների շարքում, որտեղ մեկնություն են ստացել թյուրքական ցեղերի վաղ պատմությանը վերաբերող բազմաթիվ հարցադրումներ, առանձնահատուկ կարևորություն ունի Ռաշիդ ադ-Դինի հիմնարար «Ջամ աթ-թավարիխ» («جامع التواريخ») աշխատությունը (XIV դ.), որն ընդգրկում է տվյալ ժամանակաշրջանում հայտնի գրեթե բոլոր ժողովուրդների պատմությունը: «Ջամի աթ-թավարիխ»-ում օղուզների վերաբերող հատվածը վերնագրված է՝ «Օղուզի և նրա հետնորդների պատմությունը, ինչպես

¹⁶¹ Bazin 1953: 315-316, տե՛ս նաև Басилов 1990: 402.

¹⁶² Басилов 1968: 54.

¹⁶³ Басилов 1992: 26-27, տե՛ս նաև Togan 1982: 47-52.

նան հիշատակություններ սուլթանների և թյուրք տիրակալների մասին», իսկ գիտության մեջ այս հատվածը հայտնի է որպես «Օղուզ-նամե»:¹⁶⁴ Այս աշխատությունում իրական պատմական դեպքերի հետ հմտորեն միահյուսված են բանավոր ժողովրդական ավանդազրույցներն ու առասպելները:

Թուրքմենական ժողովրդական բանահյուսության առանձնահատկություններից է տոհմաբանությունների շարքը (شجره), որը պահպանվել է գրեթե բոլոր թուրքմենական ցեղերի մոտ: Վերջիններս արտացոլում են յուրաքանչյուր տոհմի կազմավորման հստակ ժամանակաշրջանը, տվյալ տոհմի ունեցած ազգակցական կապը այլ ցեղերի հետ, հաճախ նկարագրվում էին նաև պատմական իրողություններ, սակայն առավելապես աավանդազրույցների կամ պատումների միջոցով:

Որոշ տոհմաբանական տեղեկություններ փոխանցվել են բանավոր կերպով, սակայն մեծամասամբ դրանք գրի են առնվել և այդ ձեռագրերը դարեր շարունակ փոխանցվել են հորից որդուն: Ձեռագիր տոհմաբանությունները սովորաբար պահվում էին համայնքի առավել հարգելի անձանանց՝ ցեղերի առաջնորդների մոտ: Նմանատիպ տոհմաբանությունների շարքում թերևս ամենանշանավորն է «Թուրքմենների տոհմաբանությունը» (شجره تراکیمه¹⁶⁵), որը գրի է առնվել XVII դարում Խիվայի խան Աբու-լ-Ղազիի կողմից: Վերջինս Չինգիզ խանի հետնորդն էր և սերում էր Շեյբանի տոհմից, ծնունդով Ուրգենչ քաղաքից էր: «Թուրքմենների տոհմաբանությունը» Աբու-լ-Ղազին գրի է առել թուրքմեն մոլլաների, շեյխերի և բեգերի խնդրանքով, քանի որ հարկավոր էր թուրքմենների ծագումնաբանությանը վերաբերող ավանդազրույցներն ու պատումները, որոնք բազմաթիվ ու բազմամբնույթ էին, չէին համընկնում մեկը մյուսի հետ և խառնաշփոթ էին ստեղծում, միավորել մեկ խմբագրված և պաշտոնական տարբերակում:¹⁶⁶

Աբու-լ-Ղազին իր «Թուրքմենների տոհմաբանությունը» աշխատությունն սկսում է Աստծո կողմից մարդու՝ Ադամի արարման նկարագրությունից և հաջորդաբար ներկայացնում մնացյալ բոլոր գլխավոր հետնորդներին, որոնցից միայն մի քանիսն էին համարվում մարգարե: *Լեյսեկի որդի Նոյը, ապրելով 250 տարի, Աստծո կողմից ստացավ մարգարեական շնորհ: Աշխարհակործան ջրհեղեղից փրկվեց միայն Նոյը և իր երեք որդիները՝ Խամ, Սամ և Յաֆեթ (Յաֆես): Յաֆեթը ուներ 8 որդի և իր մահից հետո գահը ժառանգեց ավագ որդուն՝ Թյուրքին, որին էլ հաջորդեց Թուրեկը: Եվ այսպես գահը հորից*

¹⁶⁴ Togan 1982; Рашид-ад-Дин 1952.

¹⁶⁵ تراکیمه – *արաբ. türkân* բառի անկանոն հոգնակի ձևն է, *պարսկ.* նշանակում է «թուրքմեններ»: Կովկասում այն ուներ ոչ այնքան ազգագրական, այլ կենցաղային նշանակություն. այդպես են անվանում քոչվոր բնակչության առավել աղքատ և նվազագույն կրթություն ունեցող խմբերին:

¹⁶⁶ Кононов 1958: 36.

ավագ որդուն հաջորդաբար փոխանցվելով՝ գահին բազմեց Կարա-խանը, որի ավագ կինը իրեն որդի պարզեց: Ծնվելուց հետո փոքրիկ տղան չէր բռնում մոր կուրծքը, և մի գիշեր մայրը երազ տեսավ, թե ինչպես է երեխան խնդրում իրեն, որ մուսուլման դառնա, եթե ոչ, երբեք չի իսմի նրա կաթը: Մայրը չէր կարող թողնել, որ երեխան սովամահ լինի և հավատացյալ դարձավ, սակայն այս ամենը մայրը գաղտնի պահեց, քանի որ Կարա-խանի ժամանակներում այնքան շատ էին անհավատները, որ եթե մեկը մուսուլման էր դառնում, սպանում էին, նույնիսկ, հայրը որդուն, իսկ որդին հորը: Երբ լրացավ փոքրիկի մեկ տարին, նա ինքն ընտրեց Օղուզ անունը: Երբ Օղուզը մեծացավ, Կարա-խանը նրան ամուսնացրեց, սակայն առաջին երկու կանայք չհամաձայնեցին իսլամ ընդունել: Միայն երրորդ կինը ընդունեց ամուսնու պայմանը, և դարձավ Օղուզի ամենասիրելի կինը, որը և Կարա-խանին հայտնեց որդու մուսուլման դառնալու փաստը: Լսելով այդ լուրը՝ Կարա-խանը որոշում է սպանել որդուն: Այս պայքարում սպանվում է Կարա-խանը, իսկ Օղուզ-խանը բազմում է հոր գահին և կոչ է անում ամբողջ ժողովրդին ընդունել իսլամ: Նրանք, ովքեր հրաժարվում էին դառնալ մուսուլման, հետապնդվում և սպանվում էին, իսկ նրանց երեխաներին ստրկության էին մատնում:¹⁶⁷

Այսպիսով, թուրքմենների իսլամականացումից հետո ստեղծվում են բավականին հին արմատներ ունեցող առասպելի նոր տարբերակներ, որտեղ Օղուզ խանը ներկայանում է, որպես ուղղափառ մուսուլման և Աստվածաշնչյան Յաֆեթի հետնորդ: Ի տարբերություն նախորդ՝ ույդուրական տարբերակի, այստեղ այլևս անհետացել են բոլոր այն դրվագները, որտեղ լավագույնս արտահայտված էին հին թուրքերի նախաիսլամական կրոնական հավատալիքները և դրանց հետ կապված պատկերացումները. Օղուզ-խանի ծննդյան հետ կապված պատումը, նրա կանանց երկնային և երկրային բնույթի մասին պատմող առասպելը և այլ դրվագներ: Այնուամենայնիվ, այստեղ տեղ են գտել նաև իրական պատմական տեղեկություններ, որոնց միջոցով հնարավոր է դառնում ուսումնասիրել տարբեր օղուզական ցեղերի ծագման պատմությունը, ինչպես նաև պարզաբանել թուրքմենների սոցիալական կառուցվածքին վերաբերող տարբեր հարցեր:

Օղուզական ցեղերից յուրաքանչյուրն իր մեջ ներառել է բազմաթիվ տոհմային ստրաբաժանումներ, որոնց կառուցվածքի վերաբերյալ որևէ տեղեկություն չի պահպանվել մինչև XI դարի կեսերը: Առաջին տեղեկություններն այս մասին կարելի է գտնել Մահմուդ Քաշգարիի *“Divan Lügat at-Türk”* աշխատությունում, որտեղ նշված է, որ XI դարի երկրորդ կեսին կար քսանչորս օղուզական ցեղեր, հետագայում, սակայն, առանձնանում է երկու

¹⁶⁷ Кононов 1958: 37-42.

հալաջական ցեղ:¹⁶⁸ Քաշգարին ընդգծում է, որ օղուգները նույն թուրքմեններն են և բոլոր ցեղերը ունեն կենդանիների խարանման իրենց հատուկ տարբերանշանը՝ *թամզան*, որով և նշավակում էին յուրաքանչյուր ցեղի սեփականությունը:¹⁶⁹

Մ. Քաշգարիի համաձայն օղուգական քսաներկու ցեղերի անվանումներն են՝ *քընըք* (قىنق), *կայըղ* (قايىق), *բայանդուր* (بايندور), *յիվա* (ايو), *սալուր* (سالور), *աֆշար* (افشار), *բիգդիլի* (بيگدلى), *բյուկդյուզ* (يوكدوز) *բայաթ* (بايات), *յազգըր* (يازغير), *էյմուր* (ايمور), *կարա-բյուլուկ* (قارابولوك), *ալկա-բյուլուկ* (آلقابولوك), *իգդիր* (ايغدير), *ուրեգիր* (اورهگير), *թուրթըրկա* (توتيرقا), *ուլա-յոնդուլուկ* (اولايوندلوق), *թյուքեր* (توكر), *ջեբնի* (جبنه), *փեչենեք* (پچنك), *ջուվուդար* (چووالدر), *ջարուկլուկ* (چارو قلوک):¹⁷⁰ Բոլոր ցեղերի անվանումները սերում են համապատասխան ցեղի նախահոր՝ Օղուգ-խանի թոռան անուններից:

Ի տարբերություն Քաշգարիի հիշատակած քսաներկու նախնական օղուգական ցեղերի, Մարվազին իր «*Թաբայի ալ-հայվան*» (“طبايع الحيوان”) աշխատությունում նշում է, որ օղուգները բաղկացած էին տասներկու ցեղերից:¹⁷¹ Սկզբնաղբյուրների տվյալների նման տարակարծությունը, հավանաբար, բխում է նրանից, որ օղուգ-թուրքմենական ցեղային միությունների կառուցվածքները ունեին երկակի ստորաբաժանումներ: Այսինքն, ինչպես նշում է Ռաշիդ-ադ Դինը՝ «Ջամի աթ-թավարիխ» աշխատությունում. «*Օղուգի որդիներից առաջացել են քսանչորս ճյուղեր, որոնցից յուրաքանչյուրը ունի իրեն հատուկ անվանումը: Աշխարհում գոյություն ունեցող բոլոր թուրքմենները առաջացել են այս ցեղերից եւ Օղուգի քսանչորս որդիներից (թոռներից)*»:¹⁷² Այնուհետև, նշված է, որ վերոհիշյալ քսանչորս ցեղերից կեսը՝ տասներկուսը, պատկանում են գորքի աջ թևին՝ *բոզուք*, մյուս կեսը՝ գորքի ձախ՝ *ուչուք*, թևին:¹⁷³ Այս մասին է գրել նաև Աբու-լ-Ղազին, և երկու հեղինակների մոտ էլ հանդիպում ենք գրեթե նույն ավանդազրույցի նկարագրությանը. «*Օղուգ-խանն ուներ վեց որդի, իսկ վեց որդիներից յուրաքանչյուն էլ իր հերթին ուներ չորս որդի: Օղուգը նախորոք հրամայում է իր նոռլյարին*¹⁷⁴ *գնալ արևելք և հողի մեջ թաղել նրան հանձնած ոսկե աղեղը, իսկ երեք արծաթե նետերը թաղել արևմուտքում, այնպես, որ ծայրերը տեսանելի լինեն: Այնուհետև կանչում է իր երեք ավագ որդիներին՝ Kün (արև), Aj (լուսին), Yulduz (աստղ), և ուղարկում նրանց դեպի*

¹⁶⁸ Бартольд 1963: 551, տե՛ս նաև Togan 1982: 44-45.

¹⁶⁹ Kaşgarlı 1939: 309.

¹⁷⁰ Atalay 2006: 55-59; տե՛ս նաև Bigdeli s.a.: 251.

¹⁷¹ Minorsky 1942: 29; տե՛ս նաև Kafesoğlu 1958: 147.

¹⁷² Рашид-ад-Дин 1952: 88.

¹⁷³ Togan 1982: 47-52.

¹⁷⁴ *Nökö(ü)r* – մոնղոլների շրջանում այս եզրը նշանակում էր «անկախ զինվոր, որը պարտավորվում է ծառայել իր առաջնորդին», իսկ թյուրք ժողովուրդների մոտ այն նշանակում էր «զինվորական ծառա, սպասավոր»:

արևելք՝ որսի, իսկ կրտսեր որդիներին՝ **Kök** (երկինք), **Tay** (սար), **Tengiz** (ծով), հրամայում է որս անել արևմուտքում: Մի քանի օրից, կատարելով հոր հրամանը, որդիները վերադառնում են՝ բերելով իրենց հետ ոսկե աղեղը և արծաթե նետերը: Օդուգ-խանը, ոսկե աղեղը կիսելով, բաժանում է այն, իր ավագ որդիների միջև և նրանց անվանում **բոգուք**, այսինքն, «մասերի բաժանել»: Իսկ երեք արծաթե նետերը հանձնում է կրտսեր որդիներին և նրանց տալիս **ուչուք**, այսինքն, «երեք աղեղ» անվանումը: Եվ քանի, որ աղեղն է նետին ուղղություն տալիս, որ կողմ այն արձակես, այն կողմ էլ կսլանա, այնպես էլ իր ավագ ժառանգները՝ բոգուքները, իրավունք էին ձեռք բերում դեկավար դիրք զբաղեցնելու և հետագայում Օդուգ-խանին փոխարինելու, իսկ իր կրտսեր ժառանգները՝ ուչուքները, պետք է լինեին վերջիններիս հպատակը՝ **նոուքյարը**:¹⁷⁵

Այստեղ հին թուրքական աշխարհընկալման հիմնական երկրայինի և երկնային մասին պատկերացումները առավել ընդգծվում են այլ խորհրդանշաններով: Երկնայինին վերաբերող խորհրդանշաններից են արևելքը, աջ կողմը, ոսկե գույնը (արև), որոնք խորհրդանշում էին գլխավորը (տղամարդ), բարին, լավը, իսկ երկրայինի հետ կապում էին արևմուտքը, ձախ կողմը, արծաթագույնը (լուսին), որոնք խորհրդանշում էին ստորինը, վատը:

Արդեն XI դարի վերջերից օդուգ-թուրքմենական ցեղերն արդեն ունեին բազմաստիճան կառուցվածք: Ուշադրության է արժանի այն փաստը, որ որևէ այլ թուրքական ցեղի կառուցվածքի նման մանրամասն նկարագրության, ինչպիսին որ ներկայացված է Մ. Քաշգարիի, Ռաշիդ ադ-Դինի, Աբու-լ-Ղազիի աշխատություններում, որևէ հեղինակի մոտ չենք հանդիպում:

Այսպիսով, իսլամը, տարածվելով թուրքմենական ցեղերի շրջանում, խորապես ներագդեց նրանց ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր մշակույթի վրա: Անմասն չմնաց նաև ժողովրդական բանահյուսությունը, որի առավել վաղ շրջանի ժողովրդական ավանդազրույցների գրավոր սկզբնաղբյուրում՝ մասնավորապես, «Օդուգ-նամե»-ում, դեռևս պահպանված են նախաիսլամական հավատալիքների վերապրուկներ: Սակայն նույն էպոսի ավելի ուշ շրջանի տարբերակներում (Ռաշիդ ադ-Դին XIV դար, Աբու-լ-Ղազի XVII դար) իրադարձությունները, ենթարկվելով իսլամական գաղափարախոսության սկզբունքներին, համապատասխանեցված են մուսուլմանական ավանդույթներին: Դառնալով մուսուլման՝

¹⁷⁵ Sümer 1992: 171; տե՛ս նաև Кононов 1958: 48-49.

թուրքմենները այլևս չէին կարող մեծարել իրենց անհավատ նախնիներին, այդ իսկ պատճառով հին արմատներ ունեցող առասպելները հանդես եկան նոր տարբերակով, որտեղ թուրքմենների նախնիները ներկայանում են որպես իսլամի հետևորդներ:

Գրականության ցանկ

- Бартольд В. В., “Очерки истории туркменского народа” – *Общие работы по истории Средней Азии. Работы по истории Кавказа и Восточной Европы, Сочинения*, т. 2, ч. 1, Москва, стр. 547-625, 1963.
- Басилов В. Н. “Некоторые пережитки культа предков у туркмен” – *Советская этнография*, № 5, стр. 53-64, 1968.
- Басилов В. Н., *Мифологический словарь*, гл. ред. Е. М. Мелетинский, Советская энциклопедия, Москва, 1990.
- Басилов В. Н. *Шаманство у народов Средней Азии и Казахстана*, Москва, 1992.
- Кононов А. Н., *Родословная туркмен. Сочинение Абул-Гази-хана хивинского*, Исследование, тексты, перевод, М.—Л., изд. АН СССР, 1958.
- Рашид-ад-дин, *Сборник летописей*, Издательство АН СССР, том I, книга I, Москва-Ленинград, 1952.
- Atalay B., *Divanü Lügati't - Türk*, Türk Tarih Kurumu Basımevi, cilt I, Ankara, 2006.
- Bazin L., “Notes sur les mots “Oğuz” et “Türk”, *Oriens*, Vol. 6, No. 2, pp. 315-322, 1953.
- Bigdeli, M. R., *Torkmenhāye Īrān*, Iran, Tehran, s.a.
- Kafesoğlu I., “A propos du nom Türkmen” – *Oriens*, Vol. 11, No. 1/2, pp. 146-150, 1958.
- Kaşgarlı Mahmud, *Divanü Lügat'it-Türk*, vol. III, trans. by Besim Atalay, Ankara: Türk Dil Kurumu Yayınları, 1939.
- Minorsky V. *Ṭabā'ī' al-ḥayavân, Chap. La Chine, les Turcs, l'Inde*, texte 18, 1942.
- Sümer, Faruk, *Oğuzlar (Türkmenler). Tarihleri-Boy Teşkilatı-Destanları*, İstanbul: Türk Dünyası Araştırmaları Vakfı, 1992.
- Togan, A. Zeki Velidî, *Oğuz Destanı: Reşideddin Oğuznâmesi*, Tercüme ve Tahlili, İstanbul: Enderun Kitabevi, 1982.

ԻՐԱՆՈՒՄ ԹՈՒՐԹՄԵՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՆՎՈՐՈՒՄԸ՝
ՑԵՂԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ՍՏՈՐԱ-
ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ (ԹԱՅԻՖԵ, ԹԻՐԵ)

Քրիստինե Գրիգորյան

Վիկտորիա Առաքելովա

Իրանագիտության կոլկասյան կենտրոն

Կասպից ծովի հարավարևելյան շրջաններում բնակվող հնագույն արևելաիրանական ժողովուրդների հետնորդների միախառնվումն ու ձուլումը հյուսիսարևելյան շրջաններից այստեղ ներգաղթող թյուրքական ցեղերին, հավանաբար, սկիզբ է առել դեռևս VI-VII դարերում և առավել մեծ ալիքի է վերածվել արդեն XI դարում՝ սելջուկ-թուրքերի արշավանքների ընթացքում: Նշյալ արշավանքների ժամանակ օղուզ-թուրքմենական քոչվոր ցեղերն են հանդիսացել սելջուկյան բանակի հիմնական հարվածային ուժը, քանզի այս ցեղերը մեծաքանակ էին և քոչվորական տնտեսվարության ու կենցաղի շնորհիվ՝ հիանալի վարժված և զինված հեծյալ զինվորներ էին:¹⁷⁶

Մի քանի հարյուրամյակ շարունակ թուրքմեններին չհաջողվեց կենտրոնացնել ուժերը և ստեղծել միասնական պետություն: Վերջիններս շարունակում էին մնալ մասնատված և մշտապես կործանարար պատերազմների մեջ էին ներքաշվում իրենց բնակեցրած տարածքներում՝ Խիվայում, Բուխարայում, Պարսկաստանում և Աֆղանստանում: Ինչպես XIII-XIV դարերում (մոնղոլական արշավանքներ), այնպես էլ հաջորդող հարյուրամյակներում թուրքմենական ցեղերը շարունակում էին իրենց տեղաշարժերը դեպի Իրանի հյուսիսարևելյան տարածքներ՝ տարածվելով ընդհուպ մինչև Կովկաս և Փոքր Ասիա: Այն ցեղերը, որոնք շարունակեցին տեղաշարժվել դեպի արևմուտք, հետագայում առանցքային դեր խաղացին Փոքր Ասիայի քաղաքական պատմության մեջ և հիմնաքար հանդիսացան Անատոլիայի թուրքերի կազմավորման գործընթացում:

Միայն XV դարի սկզբներին Փոքր Ասիայում հաստատված թուրքմենական Կարա-կոյունլու (قرة قوینلی - «սև ոչխարներ ունեցող») ցեղային միության առաջնորդ Ջահան շահին (1435-1467թթ.) հաջողվեց քաղաքական գերիշխանություն ձեռք բերել Անատոլիայում և

¹⁷⁶ Агаджанов 1969: 238.

Իրանում, սակայն վեոջինս պարսության մատնվեց թուրքմենական մեկ այլ ցեղային միության՝ Ակ-կոյունլու (آق قويونلو - «սպիտակ ոչխարներ ունեցող»), առաջնորդ Ուզուն Հասանի (1467-1478թթ.) կողմից:¹⁷⁷ Կարա-կոյունլու ցեղային միության նախնական տեղաբնակության տարածքներն են հանդիսացել Վանա լճի հյուսիսային ափամերձ շրջանները, իսկ Ակ-կոյունլու միության կենտրոնն է եղել Դիարբեքիր քաղաքը: Հակառակորդ երկու միություններն էլ բաղկացած էին տարբեր թուրքմենական ցեղերից. Ակ-կոյունլու ցեղային միության ղեկավարները սերում էին *բայանդուր* ցեղից, իսկ Կարա-կոյունլու միությունը ղեկավարվում էր *բարանի* կամ *բահարլու* տոհմի կողմից, որը թուրքմենական *յիվա* ցեղին էր կապված:¹⁷⁸ Սակայն արդեն XVI դարում Միջին Ասիայի թուրքմենների և Փոքր Ասիայում բնակություն հաստատած թուրքմենների (*թուրք(ն)ման*) միջև էթնիկապես իրար կապող որևէ օղակ այլևս չէր պահպանվել:¹⁷⁹

Վերոնշյալ տեղաշարժերի ընթացքում մեծաքանակ թուրքմենական ցեղերը հաճախ կրում էին որոշ կառուցվածքային փոփոխություններ. հին արյունակցական կապերի վրա հիմնված ցեղերը փոխարինվում էին նոր՝ ավատատիրական-տարածքային միություններով, ինչպես նաև տարբեր ցեղերի պատկանող տոհմեր ներառվում էին մեկ ցեղային միության կազմում՝ *իլ, բոյ* կամ *դաբիլա*,¹⁸⁰ ինչպես նաև հաճախ ստորաբաժանվում էին քոչվոր և կիսաքաչվոր, նստակյաց և կիսանստակյաց համայնքների: Թուրքմենական քսանչորս ցեղերի շարքում առկա էին ինչպես խոշոր միավորումներ, որոնք իրենց կազմում ունեին տասնյակ եւ հարյուր հազարավոր հետեւորդներ (*թեքե, էրսար, յոմութ, սալոր, գոքլեն, չովդուր* և այլ), այնպես էլ փոքր միավորումներ, որոնց թիվը չէր գերազանցում մի քանի հարյուրը:

XVI դարի սկզբներին թուրքմենները բնակություն էին հաստատել մի հսկա տարածքում, որի սահմանները արևելքում տարածվում էին մինչև Ամուդարյա, արևմուտքում՝ Կասպից ծով, հյուսիսում՝ Մանգիշլակ թերակղզին և Խորեզմը, իսկ հարավում՝ Կոպետդաղի լեռնահովտային շրջանները: Նրանք զբաղեցնում էին հսկա մշակովի ցանքատարածություններ, որոնք ընդգրկում էին Խորեզմի հյուսիսարևմտյան տարածքները՝ *Դարյալըք* և *Ուզբոյ* գետերը, Ամուդարյայի միջին հոսանքների հովիտները, որոնք անվանում էին Լեբաբ (*պարսկ. “لب آب”* – «գետաբերան»), Մուղրաբ և Թեջեն գետերի ավազանը, ինչպես նաև Ատրեկ և Գորգան գետերի օազիսները:¹⁸¹

¹⁷⁷ Gray 1986: 861.

¹⁷⁸ Minorsky 1954: 272.

¹⁷⁹ M. Annanepesov 2003: 128.

¹⁸⁰ *Ibid.*: 129.

¹⁸¹ Burnes 1834: 114;

XVI դարում Պարսկաստանի տարածքում բնակվում էին տարբեր թուրքմենական ցեղեր: Հյուսիսային Խորասանում բնակվում էին *թեքե* ցեղին պատկանող թուրքմեններ, որոնք այստեղ էին բնակություն հաստատել դեռևս XV դարում: Գորգան և Ատրեկ գետերի հովիտներում տեղաբնակված էին *յաքա* (*թուրք. yaka* – ավ, եզր) թուրքմենները՝ «առափնյա թուրքմեններ», որոնց նաև անվանում էին *սաինխանի*¹⁸² թուրքմեններ: ¹⁸³ Այս ընդհանրական անվան տակ հանդես էին գալիս մի քանի թուրքմենական ցեղեր՝ *ողլու*, *գոքլեն*, *էյմու(հ)ր*, *սալոր* և այլն: Թուրքմենական ցեղերը հիմնականում զբաղվում էին քոչվոր անասնապահությամբ, իսկ, օրինակ, *էյմու(հ)ր* ցեղը, որի անդամները սակավթիվ էին, զբաղվում էին հիմնականում հողագործությամբ:¹⁸⁴

XVI դարում Պարսկաստանում հաստատվել էր Սեֆյան դինաստիայի (1501-1722թթ.) իշխանությունը, որին հարևան էին Խիվայի և Բուխարայի խանությունները: Թուրքմենների հետագա մի քանի հարյուրամյակների պատմությունը անխախտելիորեն կապված է այս երեք տերությունների վարած քաղաքականության հետ: Ինչպես Խորեզմի շուկաներում, այնպես էլ Պարսկաստանի հյուսիսային վարչական տարածքներում թուրքմենները հիմնականում զբաղված էին առևտրով՝ փոխանակելով իրենց ընտանի անասունները և այլ գյուղացիական արտադրանքը հացահատիկի, ինչպես նաև տարբեր ձեռքի աշխատանքների հետ:¹⁸⁵ Սակայն Խիվայի խաների ջրի և հողային սեփականության հարցերին վերաբերող անհանդուրժողական, խիստ քաղաքականության պատճառով հաճախակի էին նաև հակասություններն ու ընդհարումները, որոնք երբեմն վերածվում էին սուր բախումների: Այս ժամանակաշրջանում թուրքմենական ցեղերի մեծամասնությունը, ենթարկվելով Խիվայի խանությանը, պարտավորված էին խոշոր եղջերավոր անասուններից *զեքաթ* (*زکات*)՝ ողորմություն-հարկ վճարել տիրակալին, որի համաձայն տարեկան մոտ 60,000 գլուխ ոչխար պետք է մատակարար էին խանի արքունիքի խոհանոց: Հետաքրքրական է, որ որոշ թուրքմենական ցեղեր ավելի շատ էին հարկ վճարում, քան մեկ այլ ցեղային միություն: Ինչպես, օրինակ, *էրսարիները* և «արտաքին» և «ներքին» *սալորները* առանձին-առանձին պարտավոր էին 16.000 գլուխ ոչխար հատկացնել խանին, իսկ *թեքե*, *սարիկ* և *յումութ* ցեղերը միասին՝ միայն 8.000 գլուխ ոչխար:¹⁸⁶ Միևնույն ժամանակ Խորասանում՝ Նիշապուրում, Սաբզևարում և Մերվում թուրքմենական *բայաթ* ցեղը պահպանում էր իր ղեկավար

¹⁸² *Սաին-խանի թուրքմեններ* - իրանական պատմագիրները այսպես են անվանել Գորգան և Ատրեկ գետերի միջև բնակվող թուրքմեններին: Սաինը մոնղոլական անուն է, որը կրել է Բատիյ խանը (Ոսկե Հորդա):

¹⁸³ Джикиев 1961: 26; տե՛ս նաև Бартольд 1963: 598.

¹⁸⁴ Логашева 1976: 13.

¹⁸⁵ Annanepesov 2003: 130.

¹⁸⁶ *Ibid.*: 131, տե՛ս նաև Бартольд 1963: 597.

դիրքերը:¹⁸⁷ Այսպիսով, թուրքմենական զանազան ցեղեր, տարբեր դիրքեր էին գրավում իրենց զբաղեցրած տարածաշրջանների ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ քաղաքական կյանքում: Մի քանիսը ղեկավար դիրքեր էին զբաղեցնում, իսկ մյուսները ժամանակի ընթացքում նույնիսկ տարալուծվում էին այլ, ավելի մեծ ցեղային միությունների կազմի մեջ՝ *էրսարի, թեքե, յումութ, գոքլեն* և այլն:

XVII-XVIII դարերի ընթացքում շարունակվում էին թուրքմենների անկանոն տեղաշարժերը, որոնք հետևանք էին անդադար կործանարար հակամարտությունների և բազմաթիվ ապստամբությունների, ընդվզումների ընդդեմ Խիվայի և Բուխարայի խաների, ինչպես նաև պարսկական շահի իշխանության դեմ: Պարսից Նադիր շահը (1736–1747թթ.) նախքան պարսկական զահին բազմելը՝ 1728թ., լինելով Աբիվերդի շրջանի կառավարիչ՝ բազմաթիվ արշավանքներ է կազմակերպել ընդդեմ թուրքմենների, որոնց հիմնական ցեղային միություններից՝ *գոքլեններն* ու *յումութները*, բնակություն հաստատելով Կասպից ծովի հարավարևելյան ափին, Ասթարաբադի շրջանում, նաև Ատրեկ և Գորգան գետերի երկայնքով, շարունակ ապստամբում էին իշխանության դեմ:¹⁸⁸ Այս ժամանակահատվածում Հյուսիսային Խորասանում արդեն կազմավորվել էին մի շարք ավատատիրական մանր սեփականություններ, որոնց էթնիկական կազմը բավականին խայտաբղետ էր. Քուչանում, Դերգեզում և Աբիվերդում բնակվում էին քրդերը, ինչպես նաև թյուրք-աֆշարներ, որոնք ևս սերում էին օղուզական ցեղերից:¹⁸⁹ Նադիր շահը ևս սերում էր թուրքմենական *աֆշար* ցեղից՝ Խորասանի սահմանային Դերգեզ (Դասթգերդ) շրջանից: Սակայն այս փաստը չխանգարեց Նադիր-շահին արշավանք կազմակերպել իր դեմ ապստամբած ինչպես իր ցեղակիցների՝ աֆշարների դեմ, այնպես էլ վերջիններիս հարող Դուրունի թուրքմենական *ալի-էլի, իմրելի, թեքե* և *յումութ* ցեղերի դեմ: Նադիր շահին հաջողվեց կողոպուտի և կոտորածի միջոցով հպատակեցնել թուրքմենական ցեղերին:¹⁹⁰ 1740թ. վերջինս գրավեց Բուխարայի խանությունը առանց որևէ դիմադրության, իսկ Խիվայի խանությունում շահի զորքերը հանդիպեցին թուրքմենական տարբեր ցեղերի համառ դիմադրության:¹⁹¹ Միջինասիական խանությունների գրավումից հետո յումութ-թուրքմենների մեծ մասը Խորեզմից ստիպված հեռացավ դեպի Կասպից ծովի արևելյան տարածքներ՝ Մանգիշլակ և Ասթարաբադ:¹⁹²

Թուրքմենական ցեղերի տեղաշարժերը, որոնք ուղեկցվում էին միջցեղային բազմաթիվ հակամարտություններով, Իրանի հյուսիսարևելյան շրջանների

¹⁸⁷ Каррыев и др. 1954: 239.

¹⁸⁸ Каррыев и др. 1954: 242.

¹⁸⁹ Логашева 1976: 15-16.

¹⁹⁰ Каррыев и др. 1954: 239-240.

¹⁹¹ Бартольд 1963: 597; տե՛ս նաև Annanepesov 2003: 135-136; Annanepesov and Bababekov 2003: 68.

¹⁹² Hambly 1991: 110.

ասպատակություններով և անհամար ապստամբություններով, շարունակվեցին նաև Ղաջարների իշխանության տարիներին ընդհուպ մինչև XIX դար՝ ռուս-պարսկական պատերազմները և ցարական զորքերի կողմից Խորեզմի գրավումը։ Զանգավածային տեղաշարժերը մասամբ դադարեցին միայն այն ժամանակ, երբ թուրքմեններով բնակեցված տարածքները 1880-ական թվականներին բաժանվեցին ցարական Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքված միջպետական համաձայնագրի համաձայն և պաշտոնական սահման հաստատվեց Ատրեկ գետը։¹⁹³ Սակայն թուրքմենական առանձին ցեղեր՝ *յոմութ, թեքե, սալոր, սարիկ*, որոնք ունեն քոչվորին հատուկ ապրելակերպ, դեռ երկար ժամանակ շարունակում էին հատել սահմանը և կատարել իրենց սովորական ամառային և ձմեռային տեղաշարժերը։¹⁹⁴

Իրանաբնակ թուրքմենական ցեղերի հիմնական ստորաբաժանումների կառուցվածքային առանձնահատկությունները և վերջիններիս բնակության վայրերը եղել են տարբեր հետազոտողների ուշադրության կենտրոնում։ Ներկայումս իրանական տարածքներում բնակվող թուրքմենական ցեղային միավորումներից թվաքանակով ամենամեծն են համարվում *յոմութները* և *գոքլենները*, որոնք ստորաբաժանվում են ավելի փոքրաքանակ ցեղերի։ Կասպից ծովի առափնյա շրջաններում, ինչպես նաև Դաշթ-ե Գորգանի արևմտյան հատվածում բնակվում են *յոմութ-ջաֆարբայ (յարալի և նուրալի* ստորաբաժանումներով) ցեղային միությունը, որից դեպի արևելք՝ Ատրեկ գետի երկայնքով և Գորգան գետի միջին հոսանքներում են բնակեցված *յոմութ ակ-աթաբայները*։ Ավելի արևելք, Խորասանում՝ Քուչանում և Դերգեզում են բնակվում գոքլեն-թուրքմենները։ Խորասանի հյուսիս-արևելքում՝ Մաշհադի և Սարախսի շրջաններում կան թուրքմեն *սարիկների, սալորների* և այլ ավելի մանր ցեղերի բնակավայրեր։¹⁹⁵

Ստորև կներկայացնենք թուրքմենական ցեղային միությունների ստորաբաժանման կարգը, որը դեռևս XIX դարի կեսերին ամենայն մանրամասնությամբ նկարագրված է հունգարացի ճանապարհորդ Արմինի Վամբերիի «Ճամփորդություն Միջին Ասիայով» վերտառությամբ ճամփորդական նոթերում։ Այստեղ տեղ են գտել ոչ միայն թուրքմենական ցեղային միությունները և դրանց կառուցվածքը, այլև, ընդհանուր առմամբ, թուրքմենների տնտեսության, կենցաղի և որոշ սովորությունների նկարագրություններ։ Համաձայն Վամբերիի թուրքմեններն երբեք մեկ միասնություն չեն կազմում և իրենց բազմաթիվ տոհմերը անվանում են *խալղ* («خلق» - *արաբ.* մարդիկ, ժողովուրդ)։ *Խալղ* եզրույթին զուգահեռ օգտագործվում է նաև *իլ* եզրը։

¹⁹³ Каррыев и др. 1954: 363; տե՛ս նաև Логашева 1976: 33.

¹⁹⁴ Марков 1976: 207; տե՛ս նաև Бартольд 1963: 623; Логашева 1976: 16; Irons 1975: 62.

¹⁹⁵ Логашева 1976: 16; տե՛ս նաև Menges 1951: 276; Irons 1975: 60.

Յուրաքանչյուր *խալղ* ունի իր հատուկ անվանումը՝ *չավդուր* (چاودور), *էրսարի* (ارزاري), *ալի-իլի* (آل علی), *կարա* (قره), *սալոր* (سالور), *սարիկ* (ساريق), *թեքե* (تکه), *գոքլեն* (گوکلان), *յումութ* (يموت): Վերոհիշյալ բոլոր *խալղերը* ստորաբաժանվում են *թայիֆեի* (“طایفه” – *թուրքմեն. ցեղ*), որոնք էլ իրենց հերթին բաժանվում են *թիրեների* (“تیره” – *թուրքմեն. գերդաստան, տոհմ*):¹⁹⁶

Ստորև առավել մանրամասն կանդրադառնանք Ա. Վամբերիի *սաֆար-նամէում* մանրամասնորեն նկարագրված միայն մի քանի առավել մեծաքանակ և նշանակալի ցեղային միություններին, որոնք ցայսօր բնակվում են իրանական տարածքներում: Ստորև ներկայացվող ցեղանունների աղյուսակներում պահպանված է հեղինակի՝ Ա. Վամբերիի լատինատառ տառադարձությունը, իսկ հայերենը տառադարձվել է Մ. Բիգդելիի պարսկերեն տարբերակից¹⁹⁷:

Սալորները¹⁹⁸ թերևս հնագույն թուրքմենական ցեղերից են, որոնք հայտնի են դեռևս արաբական նվաճումների ժամանակներից: Բնակեցված են եղել Մերվում, սակայն հետագայում դուրս են մղվել այնտեղից *թեքեների* կողմից և բնակություն են հաստատել Մարչահի շրջակայքում:¹⁹⁹

Թուրքմեն-սալորների ստրաբաժանումներն են՝

<i>թայիֆե</i>	<i>թիրե</i>
یلاوچ - յալավաջ (Jalavadsch)	اردوخوجه, سقر - սակար (Sakar), پیشی - թիշի (Jisi), ياسن - յաշն (Jas), اوردوخودشا (Orduchodscha)
قهرمان - կարաման (Karaman)	بی بلاغی, گرجیکلی - գորջիքլի (Gordschikli), علم - ալամ (Atam), بےبولهگی (Beyboleği)
آناپولاغی - անաբոլաղի (Anabolegi)	باقاشت وره تیمور, بخارا - բոխարա (Bochara), یادشی - յադշի (Jadschi), پاشاکتوره-թիմուր (Bakaschtore-timur)

Սարիկները բնակվում են Մուղրաբ գետի մերձափնյա Փենդեի շրջակայքում և թշնամաբար են վերաբերում բոլոր թուրքմեններին՝ բացառությամբ միայն հարևան *ջամշիդների*: *Սարիկների* ստորաբաժանումներն են՝

<i>թայիֆե</i>	<i>թիրե</i>
خراسانی - խորասանլի	کزل - կըզըլ چالی - խոջալը (Chodschali), بدنگ - Բեդենգ (Bedeng), حسینعلی - հուսեյնալի (Huseinali), (Kisil)

¹⁹⁶ Вамбери 2003: 144; տե՛ս նաև Bigdeli s.a.: 286.

¹⁹⁷ Bigdeli s.a. 286-294.

¹⁹⁸ Սալոր ցեղային միության կազմի մեջ էին մտնում այսօրվա *թեքե*, *սարիկ*, *էրսարի* և *յումութ* թուրքմենները դեռևս XVI-XVII դարերում:

¹⁹⁹ Bigdeli s.a. 145; 287; տե՛ս նաև Irons 1975: 59.

(Chorasanli)

بیراج - pիրաջ (Biradsch)	شوجان, کولجا, کانیباش (Kanlibasch), کولجا - կուլջա (Kultscha), շուջան(Sudschan)
سوخته - unխթե (Sochti)	پاپیر - موماتاق (Mumatay), پاپیر - յափիր (Japyr), կադիր (Kadyr)
آلاشا - ալաշա (Alascha)	حسین قره, بقاتا - پوگادشا (Bogadscha), خجک - խոջաք (Kodschak), հուսեյն կարա (Huseinkara), اقتسیز - زاساد (Saad), اوکیناسیق (Oekensis)
هرزقی - հերզեկի (Hersegi)	قرما - گانی بک (Dschanibeg), جانی بک - یرقی (Jerki), جاتیان, جاپاقی - زاپاگ (Japagy), زافا (Kurama), زافا (Jatan), زافا (Japagy):

Թեքե թուրքմենները, ըստ Վամբերիի, իր ժամանակների թվաքանակով ամենամեծ և հզորագույն ցեղերից էր։ Բաժանվում էր երկու գլխավոր խմբերի՝ Ախալի *թեքեներ* (Թեքենից արևելք) և Մերվի *թեքեներ*։ Եվ քանի որ նրանց բնակեցրած շրջաններում հողգործության համար պիտանի հողը բավարար չէր, ստիպված զբաղվում էին կողոպուտներով և ավազակությամբ։ Այս ցեղը իսկական անեծք էր Պարսկաստանի արևելյան շրջանների և Հերաթի համար։

<i>թայիֆե</i>	<i>թիրե</i>
اوتمیش - ութմիշ (Oetemisch)	سلطان سبز, کلت شو (Kelletscho), سیتچمز - سچمز - قاره احمد, کاه احمد (Kara Ahmed)
بخشی - բախշի (Bachschi)	کرساغری, تپاز, پیرنگ - پوهای (Topas), تاشاجاک, آلاچاگوز, کورساجری (Korsagry), آلاچاگوز (Aladschagos), آق صفی گوه, تاشاجاک (Taschajak), قاضي لر, مارسی - ماری (Mawi), قاضي لر (Sakir), قاضي لر (Kasuar),
تقتمیش - թոկթամիշ (Tochtamisch)	امان شاه, بوق برون - بوق برون (Bokburun), قار, کوقچه بیگ - گوتسچه بیگ (Goktsche Beg), قار (Kara), جاسی, یوسف - یوسف (Jusuf), چنگور, چار (Char), چنگور (Kongor), چنگور (Jasi), اریق قراجا (Arik Karadscha):

Գորքեն թուրքմենները հնուց ի վեր բնակվել են ներկայիս Թուրքմենստանի հարավարևմտյան շրջաններում և Իրանի հյուսիսում՝ Մազանդարանում և Գորգանում։ Վամբերին նրանց բնութագրում է որպես ամենախաղաղ և քաղաքակիրթ միավորում։

Գոքլենները զբաղվում են հիմնականում հողագործությամբ:²⁰⁰ Վերջիններս ունեն հետևյալ ստորաբաժանումները՝

<i>թալիֆե</i>	<i>թիրե</i>
չակիր - چاکر (Tschakir)	- تورامن (Alamet), علامت - գոկդիշ (Gokdisch), թորաման (Toraman), خورتا - խորթա (Chorta), կարավուլ (Karawul), قول قره - կուլկարա (Kulkara), باينال - բայնալ (Baynal),
բիգդիլի - بیگدلی (Begdili)	بوران (Amanchodscha), امان خوجه - փանք (Park), پارشان (Boran), قاریشمز - կարիշմազ (Karischmar),
կայի - کای (Kaji)	ارقلی - էրկեկլի (Erkekli), تقنجی (Akindschik), آقین جیق - կըզըլ (Kisil), قودانا (Bokchodscha), بون خوجه - թիկենջի (Tikendschi), کودانا (Kodana), لمق - լեմեկ (Temek), قانیاس - կանաս (Karnas), داری - դարի (Dari),
թեբալկան - قره بالکان կարաբալքան (Karabalkan)	- سیگیرسیقی (Kapan), قاپان - չոթուր (Tschotur), اشج - աջիբեգ (Adschibeg), پاشج - սիգիրսիկի (Sigirsiki),
կորոկ - قوروق (Kyryk)	- دهنه (Sufian), صوفیان - գիյինլիկ (Gijinlik), زهنه (Dehene), قره قوسو - կարակուսու (Karakusu), چکه - չեքե (Tscheke), گوقزه (Goktsche), قاباس سقل - կաբասակուլ (Kabasakul), اونگوت (Oengut), کنگور - կոնգոր (Kongor),
բայինդիր - بايندر (Bajindir)	- ياپاکي (Koruk), قرق - կալանջի (Kalaydschi), ياز اگاليک (Kesir), قصير - կեսիր (Kesir), ياچي - յափաքի (Japagi), تورنگ (Toreng), ياساگاليک (Jasagalik),
գերկեզ - گرکز (Gerkes)	اتانياز (Kose), ملار - մոլլալար (Mollalar), بور (Borre), محرم - մեհրեմ (Mehrem), Atanijas),
յանգակ - يانگاک (Jangak)	قورسوت (Kotschut), ماجيمان - մաջիման (Madschiman), ساريدشه (Kotu Disegri), قوتو ديزگری - կոթու դիզգրի (Kotu Disegri), اکيز (Ekis), ساريدشه (Saridsche),
զանգրիկ - زن گریک (Sengrik)	خار (Kutschi), قوچي - կուչի (Kutschi), شېخ بگی (Scheischbegi), قره شور - կարաշուր (Karaschur),
այ - آي درویش	دهلی (Kodschamas), قچاماز - ուչու (Oetschu), اوچو

²⁰⁰ տե՛ս նաև Irons 1975: 59.

դերվիշ (Aj Derwisch) (Dehli), چيق سارى - չիկսարի (Tschiksari), عرب - արաբ (Arab), آدشم - ադշեմ (Adschem):

Յոմուք թուրքմենները, որոնք բնակվում են Կասպից ծովի արևելյան ափամերձ շրջաններում և մի քանի կղզյակներում, հայտնի են ընդհանրական «Գորգանի յոմուքներ» անվամբ: Կան նաև «Խիվայի յոմուքներ», որոնք բնակվում են Օքսուսի (Ōxus՝ Ամուդարյա) շրջակայքում: Յոմուքները կազմում են հետևյալ ենթաբաժանումները՝

թայիֆե

թիրե

آتابای - արաբայ
(Atabay)

صحنه - սեհնե
(Sehene), - دونگيرچى

դունգիրչի

(Dungirtschi), تانا - թանա

(Tana), قيزاركا - կիզարքա

(Kisarka), قشه - կեշե

(Kese), تمق - թեմեկ

(Temek),

جعفر باى - ջաֆեր
բայերը (Dschafer
bay) բաժանվում են
2 խմբի՝

يارعلى - յարալի (Jarali)

قزل, ايرى تماچ (Iri Tomatsch), - իրի թոմաչ

سقى, - սակալի

آريگ قزلى, - արիգ կրզելի

(Arigkoseli), چقان برقان - չոկան բորկան

(Tschokkan borkan), اموق تماچ - օմուկ

թոմաչ (Onuk Tomatsch),

نورعلى - նուրալի (Nurali)

حسنقللى لو قر پاتقتك - հոսանկուլուլու կոր

փաթկոթեք (Hossankululu kor

Pankotek),

شرف چونى - շերեֆ

گرگان - Գորգան (Gorgen)

توجى, قرابلقه - կարա բոլկե (Kara bolke),

չոնի (Scheref

թևեջի (Tewed-schi), تلگای - թիլգայ

Dschuni) (մի մասը

(Jilgay), جعفر - ջաֆեր (Dschafer),

բնակվում է

Գորգանում,

մյուսը՝ Խիվայում)

خیوا - Խիվա (Chiwa)

اوکوز - opnıq (Oekus), سالاک - սալաք
(Salak), عشاق - ուշակ (Ushak), قجوق -
կոջուկ (Kodschuk), مشرق - մեշրիկ
(Meschrik), امر علی - Էմրելի (Jimreli)

اوگورج علی - սեմեդին
oqurğalı (Semedin), قیرای - կիրայ
(Ogurdşali) (Giraj), تراکمه - թերեքմե
(Terekeme), ندین - նեդին
(Nedin)²⁰¹

Ժամանակակից իրանցի հեղինակների տվյալների համաձայն Իրանում բնակվող թուրքմենական հիմնական ցեղային միավորներից են *յոմութները*, *գոքլենները* և *թեքենները*, սակայն թեքենների մեծամասնությունը բնակվում է Թուրքմենստանի տարածքում: Իրանի *յոմութները* բաժանվում են երկու ճյուղից բաղկացած *թայիֆենների*՝ չոնի (چونی) կամ ակ-աթաբայ (اق آتابای) և շերիֆ-ջաֆարբայ (شریف-جعفریای), որի *թիրեններն* են համարվում՝ յարալի (یار علی) և նուրալի (نور علی) տոհմերը:²⁰² Թուրքմեն-ջաֆարբայները ներկայումս բնակվում են հիմնականում Գոմեշդաֆեի²⁰³ շրջակայքում, Կասպից ծովի առափնյա շրջաններում, իսկ թուրքմեն-աթաբայները՝ Ակ-Կալեում և Գոնբադ-է Քավուսի շրջակայքում:²⁰⁴ Զբաղվում են հիմնականում անասնապահությամբ և առևտրով:

Չնայած որ թեքե-թուրքմենների մեծամասնությունը բնակություն է հաստատել Թուրքմենստանում, այնուամենայնիվ, Իրանում ևս կան թեքե-թուրքմեններով բնակեցված կղզյակներ, ինչպես Գոնբադ-է Քավուսի շրջակայքում, այնպես էլ հյուսիսային Խորասանում՝ Բուջնուրդի հյուսիսային շրջանի Ջարգալան (جرگلان) գյուղում: Բավականին հայտնի են թեքե-թուրքմենների կանանց ձեռագործ կարպետները: Բուջնուրդի լեռնային շրջաններում թեքենների հետ միասին բնակվում են նաև այլ թուրքմենական ցեղեր՝ *նոխուրլի* (نخورلی), *իգդրրի* (ایگدری), *մեխիլի* (مخیلی), *իմրելի* (ایمرلی), *անա-ուլի* (آناولی), *մուրչալի* (مورچلی), *սունչալի* (سونچلی), *խրզրրի* (خضرلی), *էշբաբաթլի* (اشکاباتلی):²⁰⁵

Գոքլան-թուրքմենները, որոնց կազմի մեջ են մտնում երկու հիմնական *կայի* (قای) և *դոդուրդա* (دودورغه) *թայիֆենները* (կամ *իլ*), ինչպես նաև ավելի մանր ցեղեր՝ *ջան-կուրբան*, *կարաբալքան*, *թեմեկ*, *բայանդրր*, *յանգակ*, ներկայումս տեղաբնակեցված են Գորգանի

²⁰¹ Вамбери 2003: 144-148; տե՛ս նաև Bigdeli s.a.: 286-292.

²⁰² Irons 1975: 130; տե՛ս նաև Лорашева 1976: 19; Bigdeli, s.a.: 300.

²⁰³ (گمیشان یا گمیش تپه) گمش دغه – քաղաք՝ Իրանի Գոլեսթան վարչական շրջանի հյուսիսում:

²⁰⁴ Menges 1951: 276-277.

²⁰⁵ Bigdeli, s.a.: 301.

լեռնային գոտիներում, ինչպես նաև որոշակի խմբեր կան Բուքնուրդում: Վերջիններս հայտնի են իրենց մեծաքանակ ձիերի ցեղատեսակներով:²⁰⁶

Վերոնշյալ տեղեկությունները ցույց են տալիս, որ ներկայիս Իրանում բնակվող թուրքմենական ցեղային միավորումներից շատերը դեռևս 1863թ. տեղ են գտել Ա. Վամբերիի սաֆար-նամեում բերված աղյուսակում (*յումութներ՝ աղթարայ* և *ջաֆարբայ* և այլ ցեղեր, գոքլան-թուրքմեններ՝ *թեմեկ*, *յանգակ*, *բայանդըր* և այլն): Որոշ ցեղային անվանումներ համընկնում են, իսկ շատերը՝ ոչ: Հավանաբար, ժամանակի ընթացքում անվանումների անհետացումը կարելի է կապել քոչվորին հատուկ ապրելակերպի հետ, երբ նրանք ժամանակ առ ժամանակ կտրում-անցնում էին բավականին երկար տարածություններ՝ կորցնելով կապը իրենց ցեղակիցների հետ: Նաև հաճախ տնտեսական շահից ելնելով կամ որևէ պատմական իրադարձության հետևանքով՝ որևէ փոքր ցեղային միավորում տարալուծվում էր ավելի մեծ ցեղային միության շարքերում:

Թուրքմենների հասարակական կառուցվածքում և կենցաղում գրեթե առանց լուրջ փոփոխությունների պահպանվում է ցեղատոհմային բազմադարյա կառուցվածքը: Ինչին, հավանաբար, նպաստում էր այն, որ պետականության բացակայության պայմաններում ցեղային առաջնորդներն էին պարտավորվում ապահովել ողջ տոհմի պաշտպանությունը, իսկ պատերազմական գործողությունների համար առավել հարմար էր ցեղային կառուցվածքը:

Գրականության ցանկ

- Агаджанов С. Г., *Очерки истории огузов и туркмен Средней Азии IX—XIII вв.*, Ашхабад, 1969.
- Бартольд В. В., “Очерки истории туркменского народа” – *Общие работы по истории Средней Азии. Работы по истории Кавказа и Восточной Европы, Сочинения*, т. 2, ч. 1, Москва, стр. 547-625, 1963.
- Вамбери А., *Путешествие по Средней Азии*, Восточная литература, Москва, 2003.
- Джикиев А., *Туркмены юго-восточного побережья Каспийского моря*, историко-этнографический очерк, Ашхабад, 1961.
- Каррыев А., В. Мошкова, А. Насонов, А. Якубовский, *Очерки из истории туркменского народа и Туркменистана в VIII-XIX вв.*, АН ТССР, Ашхабад, 1954.

²⁰⁶ *Ibid.*: 300.

- Логашева Б. Р., *Туркмены Ирана*, Москва, 1976.
- Марков Г. Е., *Кочевники Азии, структура хозяйства и общественной организации*,
Издательство Московского университета, 1976.
- Annanepesov M., "The Turkmens" - *History of Civilizations of Central Asia*, vol. 5, pp. 127-140, 2003.
- Annanepesov M. and Bababekov H. N., "The Khanates of Khiva and Kokand and relations between the Khanates and with other powers" - *History of Civilizations of Central Asia*, vol. 5, pp. 63-88, 2003.
- Bigdeli, M. R., *Torkmenhāye Īrān*, Iran, Tehran, s.a.
- Burnes A., 1834. *Travels into Bokhara, together with a Narrative of a Voyage on the Indus* [1831–33], vol. 2, London, 1973.
- Gray B., "The Pictorial Arts in the Timurid Period" - *The Cambridge History of Iran*, vol. 6, Cambridge University Press, pp. 843-876, 1986.
- Hambly, Gavin R. G., "Āghā Muḥammad Khān and the Establishment of the Qājār Dynasty" - *The Cambridge History of Iran*, vol. 7, Cambridge University Press, pp. 104-143, 1991.
- Irons, W., *The Yomut Turkmen: a Study of Social Organization among a Central Asian Turkic-speaking Population*, University of Michigan Press, 1975.
- Menges K. H., "Research in the Turkic Dialects of Iran (Preliminary Report on a Trip to Persia)", *Oriens*, vol. 4, N 2, pp. 273-279, 1951.
- Minorsky V., "Jihan-Shah Qara-Qoyunlu and His Poetry" - *Turkmenica*, 9, *Bulletin of the School of Oriental and African Studies*, University of London, Vol. 16, No. 2, pp. 271-297, 1954.

**ԱՐՆԵԼՅԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՎԱՐՋԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ**

Մոհամադ-Ալի Մադադի

Իրանագիտության կովկասյան կենտրոն,

Մրանեյի Համալսարան

Հակառակ այն հանգամանքին, որ Ատրպատականը (Իրանի հյուսիսարևմտյան նահանգները) պատմության ընթացքում մշտապես եղել է Իրանի մշակույթի ու քաղաքակրթության կենտրոնը, այսօր այն ի մեծի մասամբ թյուրքախոս է: Այս թյուրքախոսությունը, սակայն, որևէ էթնիկական հիմք չունի. այն, ըստ ամենայնի, երկրորդական երևույթ է և դեմոգրաֆիական զարգացումների հետ չի առնչվում: Ասել է թե՛ տարածքի բնակչությունը երբեք չի տեղահանվել, չի տեղափոխվել և խոշոր կատակլիզմների չի ենթարկվել: Օտարերկրյա զավթիչները՝ սելջուկներից սկսած մինչև թաթարներն ու մոնղոլները, տարածաշրջանի էթնիկական պատկերը չեն կարողացել փոխել, քանզի թվային առումով դրանք միշտ էլ կազմել են բնիկ տարրի հետ համեմատած չնչին տոկոս: Առհասարակ թյուրքական լեզվական շղարշը շատ ուշ է պատել Ատրպատականը: Դեռևս 12-րդ դարի իտալացի ճանապարհորդ Մարկո Պոլոն, լինելով Թավրիզում, ոչ մի խոսք չի ասում թյուրքերի կամ թյուրքալեզուների մասին, այն դեպքում, երբ մանրամասն նկարագրում է քաղաքի բոլոր կրոնական ու էթնիկ խմբերը: Անգամ ներկայացնում է հայերի դավանական բաժանումները՝ լուսավորչական հայեր, կաթոլիկ հայեր և այլն: Թյուրքախոսությունը տարածում է գտել Ատրպատականում և խորացել 15-րդ դարի վերջից և 16-րդ դարի սկզբից: Ընդ որում, այն երբեք չի ունեցել համապարփակ բնույթ. տեղական իրանախոս կղզյակները միշտ էլ գոյություն են ունեցել և մինչ օրս շարունակում են մնալ: Օդուզական ճյուղի ազարիական խոսվածքների վերջնական արմատավորումը Ատրպատականի տարածքում տեղի է ունեցել, թերևս, 19-րդ վերջում:

Ինչևէ, թեկուզ տարածքի պատմական ժողովրդագրությունը քննարկելիս, թյուրքալեզվությունը էթնիկական չափանիշ չի հանդիսանում, այնուհանդերձ, այդ

երևույթը իր որոշակի ազդեցությունն է ունեցել Ատրպատականի տեղանվանական համակարգի վրա: Ժամանակի ընթացքում առաջացել են բնակավայրեր, որոնք կոչվել են թյուրքական անվանումներով: Սակայն, բնիկ իրանական տեղանվանական ժառանգությունը տարածքում երբեք չի փոխարինվել թյուրքականով. այն է՝ տարածքի բնիկ անվանումները մինչ օրս հարատևում են: Ավելին, հակառակ թյուրքալեզվության լայն շրջանառմանը՝ Ատրպատականի թյուրքական տեղանունների քանակը, ընդհանուր առմամբ, զգալի տոկոս չի կազմում և դրանք, գլխավորապես, վերաբերում են միկրոտոպոնիմիկային՝ փոքր բնակավայրերին ու տեղանքին:

Ատրպատականի թյուրքական տեղանունների ընդհանուր պատկերի ամփոփումը ստորև տալիս ենք Վարզական շահրեսթանի օրինակով: Տեղանունների դասակարգումը կարելի է տալ հետևյալ կերպ.

1. **Տեղանուններից կազմված տեղանուններ:** Այս կազմությունները կարելի է հստակ տարբերակել թյուրքական *-lū* վերջածանցի առկայությամբ. անվան առաջին բաղադրիչը ցեղանվան հիմքն է, *-lū-*ն՝ ցեղանվանակերտ վերաբերական ածականի ցուցիչը: Հմմտ.՝ Իշաղլու (ایشقلو/ Īshaqlū), Մեհտարլու (مهترلو/ Mehtarlū), Համամլու (حامملو/ Hamāmlū) և այլն:

2. **Տեղանուններ, որոնք կազմվում են *-kandī* կամ *-kendi* տոպոֆորմանտով:** Վերջինս, չնայած լայն տարածում ունի օղուզական բարբառներում և համարվում է թյուրքական, սակայն, իրականում, իրանական ծագում ունի: Այն փոխառվել է սողդ. *kanθ* «գյուղ, քաղաք» բառից, որը հանգում է հին իր. **kan-* «քանդել» արմատի **kanta-* անցյալի դերբայի ձևին, որը հատկապես տարածում է գտել միջինասիական տեղանուններում՝ *-kent*, *-kend*, *-kand*, *-ket*, *-kat*, թյուրք.՝ *-kendi* ձևերով: Այս ցուցիչով Վարզականում վկայված է, օրինակ, Սամսամքանդի (صمصام کندی/ Samsām Kandī) գյուղը, որը նշանակում է «Սամսամի գյուղ»: Այս ցուցիչով կազմությունների առաջին մասը որպես օրենք, անձնանուններ են՝ «այսինչի գյուղ» ընդհանուր իմաստով և զուգահեռ գործածվում են *-ābād*-ով կազմությունների հետ:

3. **Անվանումներ թուրք. qešlāq «ձմեռանոց» բառի հետ,** ինչպես՝ Ալուչե Ղեշլաղ (آلوچه / Ālūčē Qešlāq), Ղայե Ղեշլաղ (قیه قشلاق/ Qayē Qešlāq): Այս տեղանունների առաջին

մասերը համապատասխանաբար նշանակում են է *ālūča* «սալոր» և *qaya* «ժայռ».
առաջինը՝ պարսկերեն, երկրորդը՝ թուրքերեն:

3. **Գույն նշանակող ածականներից կազմված տեղանուններ**, ինչպես Յաշիլ (*ياشیل*/
Yāshīl) (բառացի՝ «կանաչ»), Սարը Չաման (*ساري چمن*/
Sārī Čaman «դեղին մարգագետին»), Ղարա Ղայե (*قره قيه*/
Qara Qayah «սև քար») և այլն:

4. **Bolāy «աղբյուր» բառով և գույն նշանակող ածականով կազմություններ**,
ինչպես՝ Ղարա Բոլաղ (*قره بلاغ*/
Qara Bolāy, բառացի՝ «սև աղբյուր»), Աղբոլաղ (*اغ بلاغ*/
Āybolāy, «սպիտակ աղբյուր»), Սարը Բոլաղ (*ساري بلاغ*/
Sārī Bolāy, «դեղին աղբյուր») և
այլն:

5. **Խառը կազմություններ**, որոնք կարող են արտահայտել բնության երևույթներ,
բուսանուններ և այլն, ինչպես Գոլչուլ *گل چول*/
Gol Čūl - պրսկ. *gol* «ծաղիկ, վարդ» և
թուրք. *çöl* «ամալի վայր, անապատ» բառերից, այսինքն՝ «ծաղկառատ ամալի տեղ».
Յենգիջա *ينگجه*/
Engiĵa - թուրք. *yangi/ yeni* «նոր» ածականով և *-ja* «տեղ»
տոպոֆորմանտով՝ «նոր բնակավայր» իմաստով. Սեղայ *سقاي* / *Seqāy* - թուրք. *sağ* «աջ»
բառից, այսինքն՝ «աջ կողմում գտնվող բնակավայր» և այլն:

Այսպիսով, Վարզականի և առհասարակ Ատրպատականի թյուրքական
տեղանունները կազմությամբ և իմաստով չունեն այն բազմերանգությունը ինչը
տարածաշրջանի բնիկ իրանական տեղանուններին է հատուկ: Դրանով հանդերձ,
սակայն, թյուրքական տեղանունների ուսումնասիրությունը ըստինքյան կարևոր է
լեզվաբանական այս հետաքրքիր բնագավառի ընդհանուր օրինաչափությունների
ուսումնասիրության առումով:

РЕКОНСТРУКЦИЯ ДРЕВНИХ МИГРАЦИЙ ИРАНСКИХ ПОПУЛЯЦИЙ НА ОСНОВЕ ГЕНЕТИЧЕСКИХ ДАННЫХ

Левон Епископосян

Институт молекулярной биологии, НАН РА

Особенности генетической структуры населения Среднего Востока свидетельствуют о существовании достаточно изолированных друг от друга древних поселений и активных доисторических миграциях в пределах данного региона. Огромное генетическое разнообразие народов указывает на то, что указанная географическая область, будучи на перекрестке различных континентов, играла ключевую роль в экспансии популяций различных эпох со времени появления современного человека в Евразии (Cavalli-Sforza, 1996; Regueiro et al., 2006). Наиболее существенным и продолжительным по влиянию фактором в колонизации человеком планеты была его адаптация к географическим, ландшафтным и климатическим особенностям окружающей среды, результатом чего стали, в частности, зарождение земледелия и появление кочевого скотоводства. Выраженные генетические различия между народами, проживающими на данной территории, в определенной мере также является результатом влияния на этногенетические процессы условий окружающей среды – в частности, регионального ландшафта. Например, пустыни Дашт-э-Кавир и Дашт-э-Лут в Иране и горная система Гиндукуш на востоке Афганистана служили в качестве потенциальных барьеров (Quintana-Murci et al., 2001; Wells et al., 2001; Qamar et al., 2002; Shepard et al., 2006), а Баб-эль-Мандебский пролив и область вдоль южного побережья Ирана, Афганистана и Пакистана – Белуджистан – действовали как естественные коридоры для продвижения людей (Quintana-Murci et al., 1999; Stringer, 2000). Более того, изменение внешних условий могло существенным образом изменить ландшафтные особенности районов, ранее служивших в качестве проходов, в

труднопреодолимые преграды, как это произошло с Ормузским проливом (Cadenas et al., 2008).

Результаты археологических исследований показывают, что территория Ирана была заселена вскоре после выхода анатомически современного человека за пределы Африки. Хотя палеолитическое и мезолитическое население и оставило отчетливые следы на Иранском нагорье, главное развитие событий, связанное с передвижением популяций человека и имевшее отчетливые генетические последствия, происходило здесь начиная с эпохи неолита (Cavalli-Sforza, 1996; Edwards, 1971; Quintana-Murci et al., 2004; Riehl et al., 2013; Hovhannisyan et al., 2014). Это было связано с появлением в регионе Плодородного Полумесяца земледелия, а также, позже, с одомашниванием животных, что в совокупности стало причиной быстрого распространения носителей этих инновационных технологий по всей Евразии (Forde, 1948; Anthony, 1986). Около 5 тыс. лет тому назад кочевое скотоводство распространилось на территории Центральной Азии и Юго-Восточной Европы, создав тем самым возможность для быстрых передвижений больших групп людей (Zvelebil, 1980). Расширение ареала новых технологий происходило параллельно с распространением дравидийских и индоевропейских языков в Южной Азии (Renfrew, 1987; Cavalli-Sforza et al., 1988). Предполагается, что прото-эламо-дравидийский язык, вероятнее всего зародившийся в провинции Элам на юго-западе Ирана, распространялся на восток вместе с миграцией земледельцев в долину Инда и, в целом, на полуостров Индостан (Cavalli-Sforza et al., 1994; Renfrew, 1996).

Между третьим и вторым тысячелетием до н.э. Иранское нагорье подверглось вторжению скотоводческих племен из степей Центральной Азии, которые принесли с собой индоиранский язык, заменивший дравидийские языки, вероятнее всего, посредством механизма доминирования элит (Renfrew, 1987; 1996; Zvelebil, 1995).

Уже в начале первого тысячелетия до н.э. население Иранского нагорья включало в себя земледельцев и скотоводов, представлявших большое разнообразие племенных образований. С середины 6-го века до н.э. на данной территории последовательно появляются империи (ахеменидская, парфянская и сасанидская), которые

продержались, с кратким перерывом по причине вторжения войск Александра Македонского, более чем целое тысячелетие (Alizadeh, 2010). В промежутке 7-13 вв. н.э. арабы-мусульмане, сельджуки и последовавшее затем вторжение тюрко-монголов сигнализировали появление здесь новых народов. Эти волны различных вторжений и последовательные миграции привели к существенным демографическим изменениям в регионе, которые добавили новые языки и культуры к причудливой мозаике народов, сложившейся к тому времени в Иране (Johanson, 1998; Garthwaite, 2005).

Исследованию влияния древних миграций и исторических событий на генетическую структуру иранских популяций посвящен целый ряд работ в области генетической антропологии (преимущественно с использованием маркеров митохондриальной ДНК, передающейся по женской линии, т.е. матрилинейно), обзор которых приведен в данном сообщении.

Первые же исследования материнского генофонда иранцев выявили генетическую связь между иранскими популяциями и группами из Аравийского полуострова и Индии, появившуюся, вероятнее всего, в результате древних и относительно недавних генетических контактов между населением обоих регионов. Более того, региональное распределение определенных вариантов (гаплогрупп) митохондриальной ДНК свидетельствует о препятствующих потоку генов природных барьерах, которые представлены двумя главными иранскими пустынями и горной системой Загрос (Quintana-Murci et al., 2004; Metspalu et al., 2004; Terreros et al., 2011). Данный вывод был также подтвержден на основе анализа маркеров Y хромосомы, передающейся по отцовской линии, т.е. патрилинейно (Wells et al., 2001; Regueiro et al., 2006; Grugni et al., 2012). Кроме того, в представительной выборке иранских популяций было обнаружено редко регистрируемое несоответствие между широким размахом этнолингвистической изменчивости и небольшим разнообразием маркеров митохондриальной ДНК, что может быть объяснено, в частности, как географическими факторами, так и культурно-лингвистическими различиями, действующими в качестве барьеров для генетического обмена (Farjadian et al., 2011).

Понятно, что наиболее полную картину о матрилинейном генофонде той или популяции дают результаты установления всей последовательности митохондриальной ДНК. Хотя за последние годы появился целый ряд статей о полном митохондриальном геноме у популяций Ближнего Востока и сопредельных территорий, иранские образцы в них были слабо представлены (Abu-Amero et al., 2007; Abu-Amero et al., 2008; Roostalu et al., 2007; Behar et al., 2008; Shlush et al., 2008; Kujanová et al., 2009; Cerný et al., 2011; Schönberg et al., 2011; Musilová et al., 2011; Al-Abri et al., 2012; Fernandes et al., 2012; Pala et al., 2012), что не давало возможности проведения всеобъемлющего филогенетического и демографического анализа. В недавней нашей публикации (Derenko et al., 2013) впервые проанализирована достаточно репрезентативная выборка, отражающая большинство провинций и этнических групп, со специальным вниманием к трем этническим группам – ираноязычным персам, а также тюркоязычным кашкайцам и азерам.

В целом анализ митохондриальной ДНК выявляет чрезвычайно высокий уровень генетической изменчивости в иранских популяциях, сопоставимый с другими группами из Южного Кавказа, Анатолии и Европы. В результате проведенной классификации не обнаружено заметной связи между какой-либо региональной и лингвистической группой из Анатолии или Кавказа и иранскими популяциями; установлено лишь близкое генетическое родство ираноязычных персов с армянами и тюркоязычными кашкайцами, что свидетельствует об их происхождении из общего материнского генофонда. В то же время, иранские азербайджанцы оказались генетически наиболее близкими к грузинам. В этой связи следует особо отметить локализацию в генетическом пространстве азербайджанцев Южного Кавказа, которые, несмотря на их предполагаемое общее происхождение с иранскими азербайджанцами, классифицируются совершенно отдельно и занимают промежуточное положение между группировками “азербайджанцы/грузины” и “турки/иранцы”. Интересно, что в результате классификации не выявлено объединения в одну группу исследованных популяций по принципу их географической и/или генетической близости (см. рис.). Так, тюркоязычные кашкайцы, азербайджанцы и турки располагаются совершенно отдаленно друг от друга, хотя в одном из недавних сообщений было обнаружено некоторое сходство между последними двумя

группами, также основанное на полной последовательности митохондриальной ДНК (Schönberg et al., 2011).

Иранские популяции, исследованные различными авторами (Quintana-Murci et al., 2004; Metspalu et al., 2004; Terreros et al., 2011), обладают сходной структурой митохондриальных родословных и главным образом включают в себя западноевразийский компонент, представляющий около 90% всех образцов, а также весьма ограниченную порцию генетических вариантов из западной Евразии, Южной Азии и Африки. Южноазиатское и африканское влияние более выражено у иранцев из южных провинций страны.

Полученные результаты подтверждают, что популяции из Ирана, Анатолии, Кавказа и Аравийского полуострова в совокупности обладают одинаковым набором женских генетических родословных, хотя между исследованными выборками и существуют значительные различия в частотах гаплогрупп (Quintana-Murci et al., 2004; Abu-Amero et al., 2007; Derenko et al., 2013). Филогенетический анализ указывает на происхождение некоторых наиболее распространенных женских родословных на территории Ирана или в прилегающих оазисах вокруг Персидского залива, а затем их распространение по разным направлениям. Так, гаплогруппа HV2, имеющая возраст 36–42 тыс. лет, вероятнее всего, возникла на территории Ирана между временем появления здесь современных людей и последним ледниковым периодом. В результате повторных миграционных волн носители указанного генетического варианта перебрались на восток и оказались на территории Индии, где возраст данной гаплогруппы значительно меньше – 19–22 тыс. лет.

О древних миграциях с территории Ирана на Индостан указывают и особенности географического распределения гаплогруппы U7. Время распространения данной матрилинейной родословной в промежутке 30–50 тыс. лет тому назад свидетельствует о ее продолжительной генетической непрерывности (континуме) на территории, простирающейся от Ближнего Востока, через северо-западную Индию, до северных областей Центральной Азии (Metspalu et al., 2004).

При генетическом анализе митохондриальной ДНК персов и кашкайцев получены свидетельства постоянного роста численности их предковых популяций в течение почти 24 тыс. лет вплоть до наших дней, хотя промежуток 14-24 тыс. лет тому назад, как предполагается, в прибрежных зонах Персидского залива был весьма засушливым (Rose, 2010). Несомненно, что эта особенность климата повлияла на численность и мобильность охотников-собирателей по причине изменения и исчезновения внутренних саванн Аравийского полуострова и заставила их преимущественно полагаться на береговые ресурсы, поскольку огромные пространства плодородной земли в бассейне залива были не защищенными от воздействия палящего солнца (Rose, 2010). Зарегистрированное изменение климата и ландшафта может быть объяснено, в частности, передвижением огромных масс людей через регион Персидского залива, которые используя в качестве промежуточных пунктов отдыха и кратковременного поселения использовали немногочисленные сохранившиеся оазисы.

Обобщая данный обзор, приходим к выводу о том, что исследования в области генетической антропологии в первую очередь подчеркивают важную роль населения Иранского нагорья в качестве богатого источника и активного реципиента потока генов между культурно, лингвистически и генетически различающимися популяциями Среднего Востока. Ожидается, что дальнейшее изучение варибельности полногеномной последовательности митохондриальной ДНК, патрилинейно наследуемой Y хромосомы, а также аутосомных маркеров с использованием методов широкогеномного анализа в различных популяциях Ирана позволит более детально восстановить генетическую историю народов данного региона, а также реконструировать направления их древних миграций.

Список литературы

1. Abu-Amero KK, González AM, Larruga JM, Bosley TM, Cabrera VM (2007) Eurasian and African mitochondrial DNA influences in the Saudi Arabian population. BMC Evol Biol 7: 32.

2. Abu-Amero KK, Larruga JM, Cabrera VM, González AM (2008) Mitochondrial DNA structure in the Arabian Peninsula. *BMC Evol Biol* 8: 45. Roostalu U, Kutuev I, Loogväli EL, Metspalu E, Tambets K, et al. (2007) Origin and expansion of haplogroup H, the dominant human mitochondrial DNA lineage in West Eurasia: the Near Eastern and Caucasian perspective. *Mol Biol Evol* 24: 436–448.
3. Al-Abri A, Podgorná E, Rose JI, Pereira L, Mulligan CJ, et al. (2012) Pleistocene-Holocene boundary in Southern Arabia from the perspective of human mtDNA variation. *Am J Phys Anthropol* 149: 291–298.
4. Alizadeh A (2010) The Rise of the Highland Elamite State in Southwestern Iran. *Curr Anthropol* 51: 353–383.
5. Anthony DW (1986) The “Kurgan culture,” Indo-European origins, and the domestication of the horse: a reconsideration. *Curr Anthropol* 27: 291–313.
6. Behar DM, Metspalu E, Kivisild T, Rosset S, Tzur S, et al. (2008) Counting the founders: the matrilineal genetic ancestry of the Jewish Diaspora. *PLoS One* 3: e2062.
7. Cadenas AM, Zhivotovsky LA, Cavalli-Sforza LL, Underhill PA, Herrera RJ (2008) Y-chromosome diversity characterizes the Gulf of Oman. *Eur J Hum Genet* 16: 374–386.
8. Cavalli-Sforza LL (1996) The spread of agriculture and nomadic pastoralism: insights from the genetics, linguistics and archaeology. In: Harris DR, editor. *The origins and spread of Agriculture and Pastoralism in Eurasia*. London: University College London Press. pp. 51–59.
9. Cavalli-Sforza LL, Menozzi P, Piazza A (1994) *The History and Geography of Human Genes*. Princeton: Princeton University Press. 1088 p.
10. Cavalli-Sforza LL, Piazza A, Menozzi P, Mountain J (1988) Reconstruction of human evolution: bringing together genetic, archaeological, and linguistic data. *Proc Natl Acad Sci USA* 85: 6002–6006.
11. Cerný V, Mulligan CJ, Fernandes V, Silva NM, Alshamali F, et al. (2011) Internal diversification of mitochondrial haplogroup R0a reveals post-last glacial maximum demographic expansions in South Arabia. *Mol Biol Evol* 28: 71–78.

12. Derenko M., Malyarchuk B., Bahmanimehr A., Denisova G., Perkova M., Farjadian S., Yepiskoposyan L. (2013) Complete mitochondrial DNA diversity in Iranians. *PLOS ONE*, 8(11): e80673.
13. Edwards IS, Gadd CJ, Hammond NL (1971) *The Cambridge Ancient History*. Vol. 1, Part 2: Early History of the Middle East. Cambridge: Cambridge University Press. 1080 p.
14. Farjadian S, Sazzini M, Tofanelli S, Castrì L, Taglioli L, et al. (2011) Discordant patterns of mtDNA and ethno-linguistic variation in 14 Iranian ethnic groups. *Hum Hered* 72: 73–84.
15. Fernandes V, Alshamali F, Alves M, Costa MD, Pereira JB, et al. (2012) The Arabian cradle: mitochondrial relicts of the first steps along the southern route out of Africa. *Am J Hum Genet* 90: 347–355.
16. Forde CD (1948) *Habitat, economy and society: a geographical introduction to ethnology*. London: Methuen & Co. 500 p.
17. Garthwaite GR (2005) *The Persians*. Oxford: Blackwell's. 311 p.
18. Grugni V, Battaglia V, Hooshier Kashani B, Parolo S, Al-Zahery N, et al. (2012) Ancient migratory events in the Middle East: new clues from the Y-chromosome variation of modern Iranians. *PLoS One* 7: e41252.
19. Hovhannisyan A, Khachatryan Z, Haber M, Hrechdakian P, Karafet T, Zalloua P, Yepiskoposyan L. (2014) Different waves and directions of Neolithic migrations in the Armenian Highland. *Investigative Genetics*, 5: 15.
20. Johanson L (1998) The history of Turkic. In: Johanson L, Crato E, editors. *The Turkic languages*. London: Routledge. pp. 81–126.
21. Kujanová M, Pereira L, Fernandes V, Pereira JB, Cerný V (2009) Near Eastern Neolithic genetic input in a small oasis of the Egyptian Western Desert. *Am J Phys Anthropol* 140: 336–346.
22. Metspalu M, Kivisild T, Metspalu E, Parik J, Hudjashov G, et al. (2004) Most of the extant mtDNA boundaries in south and southwest Asia were likely shaped during the initial settlement of Eurasia by anatomically modern humans. *BMC Genet* 5: 26.
23. Musilová E, Fernandes V, Silva NM, Soares P, Alshamali F, et al. (2011) Population history of the Red Sea - genetic exchanges between the Arabian Peninsula and East

- Africa signaled in the mitochondrial DNA HV1 haplogroup. *Am J Phys Anthropol* 145: 592–598.
24. Pala M, Olivieri A, Achilli A, Accetturo M, Metspalu E, et al. (2012) Mitochondrial DNA signals of late glacial recolonization of Europe from Near Eastern refugia. *Am J Hum Genet* 90: 915–924.
 25. Qamar R, Ayub Q, Mohyuddin A, Helgason A, Mazhar K, et al. (2002) Y chromosomal DNA variation in Pakistan. *Am J Hum Genet* 70: 1107–1124. 6. Shepard EM, Herrera RJ (2006) Genetic encapsulation among Near Eastern populations. *J Hum Genet* 51: 467–476.
 26. Quintana-Murci L, Chaix R, Wells RS, Behar DM, Sayar H, et al. (2004) Where west meets east: the complex mtDNA landscape of the southwest and Central Asian corridor. *Am J Hum Genet* 74: 827–845.
 27. Quintana-Murci L, Krausz C, Zerjal T, Sayar SH, Hammer MF, et al. (2001) Y-chromosome lineages trace diffusion of people and languages in southwestern Asia. *Am J Hum Genet* 68: 537–542.
 28. Quintana-Murci L, Semino O, Bandelt HJ, Passarino G, McElreavy K, et al. (1999) Genetic evidence of an early exit of *Homo sapiens sapiens* from Africa through eastern Africa. *Nat Genet* 23: 437–441.
 29. Regueiro M, Cadenas AM, Gayden T, Underhill PA, Herrera RJ (2006) Iran: Tricontinental nexus for Y-driven migration. *Hum Hered* 61: 132–143.
 30. Riehl S, Zeidi M, Conard NJ (2013) Emergence of agriculture in the foothills of the Zagros Mountains of Iran. *Science* 341: 65–67.
 31. Renfrew C (1987) *Archaeology and Language: The Puzzle of Indo-European Origins*. London: Jonathan Cape. 346 p.
 32. Renfrew C (1996) Language families and the spread of farming. In: Harris DR, editor. *The origins and spread of Agriculture and Pastoralism in Eurasia*. London: University College London Press. pp. 70–92
 33. Rose JI (2010) New light on human prehistory in the Arabo-Persian Gulf Oasis. *Curr Anthropol* 51: 849–883.

34. Schönberg A, Theunert C, Li M, Stoneking M, Nasidze I (2011) High-throughput sequencing of complete human mtDNA genomes from the Caucasus and West Asia: high diversity and demographic inferences. *Eur J Hum Genet* 19: 988–994.
35. Shlush LI, Behar DM, Yudkovsky G, Templeton A, Hadid Y, et al. (2008) The Druze: a population genetic refugium of the Near East. *PLoS One* 3: e2105.
36. Stringer CB (2000) Coasting out of Africa. *Nature* 405: 24–27.
37. Terreros MC, Rowold DJ, Mirabal S, Herrera RJ (2011) Mitochondrial DNA and Y-chromosomal stratification in Iran: relationship between Iran and the Arabian Peninsula. *J Hum Genet* 56: 235–246.
38. Wells RS, Yuldasheva N, Ruzibakiev R, Underhill PA, Evseeva I, et al. (2001) The Eurasian heartland: a continental perspective on Y-chromosome diversity. *Proc Natl Acad Sci USA* 98: 10244–10249.
39. Zvelebil M (1980) The rise of the nomads in Central Asia. In: Sherratt A (ed.) *The Cambridge encyclopedia of archaeology*. New York: Crown. pp. 252–256.
40. Zvelebil M (1995) At the interface of archaeology, linguistics and genetics: Indo-European dispersals and the agricultural transition in Europe. *J Eur Archaeol* 3: 33–70.